Unpublished MS.

Synopsis phys. q. h.

Ultimum perfectior.

Itin
√220

Հրատարակ

Մ. Տ. ԵՒՈՏ

1999

ՔԻԻՐՏ ՊԷԿ

Գ. ՀԱՏՈՐԻԿ

ԱՆԱՍՏՈՒԱԾՆԵՐԸ

ԳԾԵՐ ՀԱՅ-ՔՐԻՍՏՈՆԱԿԱՆ ԿԵԱՆՔԷՆ

ԲԱՐԻԶ

1903

ԷՕՔ
ՐԱԴԱՐԱՆ
Լեո
220

ՔԻՒՐՏ ՊԷԿ

Գ. ՀԱՏՈՐԻԿ

29.224 4220-60

ՔԻՐՏ ՊԷԿ

ԳԾԵՐ ՀԱՅ-ՔՐԴԱԿԱՆ ԿԵԱՆՔԷՆ

Գ. ՀԱՏՈՐԻԿ

ԱՆԱՍՏՈՒԱԾՆԵՐԸ

I.

ՀԱՅԱՍՏԱՆԻ բազմաթիւ հովիտների չքնաղ թագուհին է Վարդենեաց – Հովիտը, որ կ'իյնայ Մաստառ[1] և Գաղիենեան հսկայ լեռների միջև, Զորրորդ Հայքում, և որն այժմ կը կոչուի՝ քրդաբնակ Տոլ գիւղի անունով Տոլի Դաշտ։

1. Աւանդութիւնը կասէ, որ Ջրհեղեղէն յետոյ Նոյ կը կամենար իր տապանովն իջնել Մաստառ սարի վրայ, բայց սա չընդունեց և ասաց. «Գնա՛ ի Մասիս, որ բարձր է քան զիս»։ Նոյ նահապետն էլ լսեց Մաստառին, բայց նրա մօտ մի յիշատակ ձգելու համար մի տախտակ թողուց նրա վրայ և ասաց՝ «Մատդ ա՛ռ», որով և սարը կը կոչուի «Մաստառ»։

Վարդենեաց Հովիտը շրջապատուած է բազմաթիւ մանր ու խոշոր անտառազարդ բլուրներով, որոնցմէ վազող անթիւ վտակները հովտի հարաւ-արևմտեան կողմը կը կազմեն Պանրոյի գետը։

Հովտի մակերևոյթը հարթ է և 10 վերստի չափ տարածութիւն ունի։ Եթէ չ'հաշուենք ձմեռնային 3–4 ամիսները՝ այդ հովիտը միշտ կանաչապատ է ու ծիծաղկոտ։ Նրան պէս-պէս ծաղիկներով ու բոյսերով զարդարելու, հարստացնելու համար ոչինչ խնայած չէ Հայաստանի շռայլ, ամենակարող բնութիւնը։

Որքան հրճւանք կ'զգայ բաղդաւոր ճանապարհորդը, երբ – մանաւանդ գարնան – բաղդ կունենայ այդ դաշտին այցելելու։

Մեր նախնիքը ի զուր չեն անուանել նրան «Վարդենեաց հովիտ»։

Վարդի և յասմիկի թփերը հովտի մի քառորդ մասը կը գրաւեն։ Երկնագոյն մանուշակը զորգի նման փռուած է ամեն կողմ։ Բրաբիոնը, շուշանի զանազան տեսակները, սուրբ Կարապետի ծաղիկը, օշոշը (լուծաղիկ), բանսրսիկը, ասպուռզանը, օսկիկը (ոսկէծաղիկ), խնկիկը, փարփարուկը, աղբար – արիւնը, կուժ–կոյրուկը, պաճպաճուկը... և

ուրիշ հոտաւէտ, սքանչելի ծաղիկների շատ տեսակները Վարդենեաց հովտի զարդը կը կազմեն։

Հապա մարգագետինները, որոնք իրենց հաճոյական գոյնովը կը կանչեն ամեն կողմ, և քու սիրտը, քու հոգին կը գերեն, իրենց սարուկը կը դարձնեն...

Նայելով դրանց՝ դու կը տրամադրես ուրանալ աշխարհի բոլոր բաները և գալ ու վայելել Հայաստանի բնութեան այդ սքանչելիքները, հրճուել նրանցմով, համբուրել այդ սուրբ հողը, թրջել նրան քու յորդաառատ արցունքներով...

Ա՛խ, սիրելի ընթերցող, դու ինքդ պէտք է այնտեղ լինես, քու բարի աչքերովդ պէտք է դիտես այդ չքնաղ, հոգեպարար տեսարանները, որ հասկանաս, թէ ինչ կեանք կարող է ունենալ մարդ՝ թէկուզ մի օր ապրելով այդ սրբազան վայրերում։ Վարդենեաց—Հովիտը նկարագրելու համար, իսկապէս, իմ խեղճ — ոգորմելի գրիչը ոչ մի բանի պէտք չիպայ. բայց լաւ համոզուած եմ, որ Մահմէտի նազելի հիւրի — փերիների մեծ ուրախութեամբ՝ երևակայութեան ստեղծած և առասպելական շքեղութեամբ օժտած ձեռնարկն կը տեղափոխուէին Վար-

զենեաց—Հովիտը, եթէ նրան, գէթ մի բա-
պէ, երազներումը տեսած լինէին!

Այժմ արի հարցուր մի անգամ, թէ ովքե՞ր են այդ հովտում բնակողները, ովքե՞ր են Հայաստանի կրծքէն բղխած այդ բարիքների վայելողները։

Ահա թէ ովքեր.

Եկ ինձ հետ, գնանք այդ հովիտը և մի այցելութիւն տանք նրան։

Նախ մտնենք այն աւերակ «ապարանքը», որ հաստատուած է Վարդենիկ սարի հարաւ — արևմտեան լանջքին վրայ, միակտուր ժայռի կրծքին, և որը՝ նայելով ժողովրդական աւանդութեան՝ շինել է Զորրորդ Հայքի Աբբեղայոս իշխանը, IV դարում, նախ քան պատմական ոճիրը գործելը։

Դա մի հսկայ շէնք է, ամբողջ քարուկրեայ, որի ներքին յարկը բաղկացած է մի քանի խոշոր բաժանմունքներէ։ Պատերի մէջ բացուած քարաշէն մուրճերը ցոյց կուտան, որ այդ բաժանմունքները մի ժամանակ եղել են իշխանին բազմաթիւ ձիերի ախոռները։ Իսկ երկրորդ յարկը, որ կանգնած է յդկուն քարէ կլոր և վեցանկիւնի սիւների վրայ՝ կլասիքական ճարտարապետութեան կատարելատիպը կը ներկայացնէ։

Նայիր պատերի վրայ քանդակած կիսարձաններին, — դրանք մեր օրերում գլուխ չի գալիք հրաշալիքներ են. թէև բարբարոս ձեռքերը թողել են նրանց վրայ սրբապիղծ աւերմանքի հետքեր...

Ահա և դատապարտեսարանը, որ տեղ մի ժամանակ կը բազմէր Հայոց իշխանը՝ շրջապատուած իր երեւելիներովը և կը վճռէր բարդ խնդիրներ ու վէճեր։

Կը տեսնե՞ս քանդակազարդ սրահ—պալատը, որի առջև հայելու նման կը բացուին Վարդենեաց—Հովի հրաշալի տեսարանները։ Այդ տեղէն կարող ես դիտել հեռուն — մինչև Արկանա, մինչև Պղնձահանքի լեռնաշղթան, — հարիւրաւոր վերստերով քեզմէն զատող տեսարաններ...

Նայիր, որքան աչքումդ այժ կայ, — ոչ որքին չես տեսնելու։ Ամեն կողմ կը տիրէ կատարեալ ամայութիւն։ Կարծես աշխարհս ոտեղծուելէն ի վեր այդ կողմերում մարդ—մարդասանք չէ եղել բնակուելիս։

Միայն այս ու այն կողմ երևցող աւերակ քաղաքների ու գիւղերի, վանքերի ու տաճարանքների հետքերն են, որ կը վկայեն, թէ մի ժամանակ այդ տեղ եղել է բնակչութիւն — խիտ, շինող—պայծառացնող բնակ-

չութիւն, – և որ այդ երկրի գլխէն անցել է մի սոսկալի փոթորիկ, մի բարբարոսական հեղեղ, որը չէն վայրերն ամայացրել, անմարդաբնակ է դարձրել...

Վարդենեաց – Հովիտ, Վարդենեաց – Հովիտ... Ո՞ւր է քո բնակչութիւնը... Ո՞ւր են քո տէրերը... Ո՞ր անիրաւ ձեռքը քեզ այդ ողբալի վիճակին հասցրեց... Ով արդեօք զրկեց քեզ քո վաղեմի փառքէն և դարձրեց բոյն ու ասպարէզ չարագուշակ բուերի, որոնք անթիւ – անհամար կը ճախրեն քո վերև և վա՜յ կու տան քու սև օրին, վա՜յ՝ քո մարած արեւին...

II.

Մի հաղիւ քսան տարեկան երիտասարդ՝ հրացանը ուսը ձգած՝ զանազան քայլերով կը դիմէր դէպի Վարդենեաց–Հովիտը։ Նա կու գար՝ այդ հովտի արեւելեան կողմն հաստատուած Սրին հայաբնակ գիւղէն։

Երիտասարդն հագել էր սև ցիսիլ անդրավարտիք և նոյն կտորէն պատրաստուած

մինթան (սալրա)։ Եղոկիոյ բրդեղէն գոտին նրա կրծքին վրայ մի թզաչափ տեղ կը գրաւէր, որի մէջ խրել էր նա մի երկփող կայծոսա տարճանակ, մի կեռ դաշոյն և մի «շիշ» կոչւող թունաւոր պողպատ, որ զէնքի տեղ կը ծառայէր։

Գլխին ծածկել էր՝ բամբկի թելերէ հիւսած մի սիրուն «թէլլիկ» (քոլող–թաստակ), որի վրայէն նա կապտել էր մի քանի գոյնզգոյն շղարշներ՝ ծայրերը հուլունքներով զարդարուած, որոնք կը սրսռային նրա բաց ճակտին վրայ։

Ջնայած հրաշալի եղանակին և շրջակայքի գեղեցիկ տեսարաններին՝ մեր ճանապարհորդը ոչ մի ուշադրութիւն չէր դարձներ նրանց վրայ։ Կարծես կեանքէն բեզարած էր նա։ Ցիսուր ու մտածկոտ դէմքն էլ գուշակել կու տար, որ մի հոգեմաշ ցաւ անզթօրէն կը կրծէր նրա սիրտը...

Բանը նրանումն էր, որ նա կը մտածէր իր քաշած տեղի «անցեալին» վրայ։ Կ'երևակայէր այն ժամանակները, երբ այդ գեղեցիկ հովիտը բռնուած էր բազմամարդ, շէն քաղաքներով ու գիւղերով։ Երբ այդ տեղ հարիւր–հազարներով Հայեր կը բնակէին և այն տեղն այդ երկիրը հարեան ազգերի

նախանձի առարկան էր։ Հայ մարդը՝ լինելով բնիկ տէրն այդ երկրի՝ իր ջանասիրութեամբ աւելի և աւելի արդիւնաւոր կը դարձնէր մայր-բնութիւնը...

Բայց փոխուեցան ժամանակները !

Երկրի բնիկ տէրը կամ արտաքսուեց այդ տեղէն և կամ զոհ դարձաւ դրացիների չար նախանձին...

Այնուհետև ամէն ինչ տակն ու վրայ եղաւ... Շէն շէն բնակավայրերը դարձան մէկ-մէկ սպանդանոց, որով կենսատու երկիրը տիրացաւ հիմակուան սղբալի վիճակին։ Ի՞նչ կը լինէր դրա վերջը։

Այդ Աստուած միայն գիտէ !

Այդ մտածմունքներով պաշարուած երիտասարդը կարող էր այլ ևս մազաչափ աշխոյժ տրամադրութիւն ունենալ, հասկանալի է, որ — ո՛չ։ Եւ նա կը շարունակէր առաջ գնալ դանդաղ քայլերով։

Բայց մտաենալով — այսպէս ասած — Արքեղայոս իշխանի ապարանքին՝ նա, յանկարծ, կանգ առաւ։ Ինչ որ անսրոշ շշունչներ կը հասնէին նրա ականջին։

Նա ուսէն վար առաւ հրացանը, անցաւ մի կաղնու ետև ու լարեց իր լսողութիւնը, որ զուցէ մի բան իմանայ։

Շունչը հետ զհետէ կը բարձրանար ապա-
բանքում։

«Երևի մարդիկ կան այն տեղ, այդ աւե-
րակում», մտածեց երիտասարդը։ Բայց թէ
ովքե՞ր են այդ մարդիկ և ի՞նչ կը շինեն
այն տեղ, նա ոչինչ չ'գիտէր։

Շատ չանցած՝ աւերակէն լուեց մի կա-
նացի ձայն, որ աւելի նման էր՝ վանդա-
կում փակուած և իր կորցրած ազատութիւնն
ողբացող թռչնիկի յուսահատական ճըլը-
լոցին։

Մի սարսուռ անցաւ երիտասարդի մար-
մնով, երբ լսեց հետևեալ բառերը՝ զաղա
քրդերէն լեզուով.

— Վէնկ մէ՝ տը, քէյնէյի կավուրան,
քրշանեան շրմարա... ա՛ ա՛ ա՛ ա՛... (Լռիր,
անհաւատի աղջիկ, կ'սպանեմ քեզ)։

Ո՞վ կարող էր լինել այդ «անհաւատի
աղջիկը», եթէ ոչ մի հայուհի. չէ՞ որ ամ-
բողջ Աշմուշատում Հայոցմէ ջոկ ոչ մի
քրիստոնեայ—անհաւատ ազգ գոյութիւն չունի։

Եւ երիտասարդն համոզուեց, որ այդ հնա-
դարեան կամարների տակ տեղի կունենայ
ինչ որ անախորժ բան. որ այնտեղ օգնու-
թեան կարօտ մի արիւնակից կայ, որին
պէտք է հասնել, ծառայել...

Ուստի դուրս եկաւ նա իր թաքստի տեղէն, կոճկեց մինթանի կոճակները և ձեռքն առնելով՝ պայթուցիչը վեր քաշած հրացանը, զգոյշ քայլերով մօտեցաւ աւերակի մուտքին, որ կը բացէր «Մուրատի–Զոր» կոչուող անզուգական վրայ։ Նա վճռել է արդէն — պէտք է ներս մտնի, թէկուզ ինչ էլ պատահի իր հետ. սակայն ի՞նչպէս անել, որ չարագործները չ՚նկատեն իրեն։

— Քու՛ղրքան խա նէպէնո՛ (շուներ, անկարելի է)..., լուեց զոհի աղեկտուր ձայնը ապարանքի երկրորդ յարկէն և այդ այնպիսի տոնով, որ պարզ ցոյց կու տար, թէ խեղճ կինը ոչ մի միջոց չունէր պաշտպանելու՝ ճչալէն զատ։

Այլևս ժամանակ կորցնելը յիմարութիւն կը լինէր։ Նա խաչակնքեց երեսը և ներս մտնելով՝ զգոյշ քայլերով վեր բարձրացաւ քարէ կիսաքանդ սանդուխէն։ Նոյն զգուշութեամբ անցաւ դատաստանասրահը, որի մուտքը անջատուած էր բուն սրահէն մարմարեայ կիսավանդակապատով՝ երկու կողմէն մի–մի սաժէնաչափ լայն առանձին բաժանմունքներ գոյացնելով։ Նա սմքեց վեցանկիւնի հատ սիւնին ետև ու սկսեց զիտել հետևեալ տեսարանը. — սրահի մէջ-

տեղում՝, ձեղունէն թափթփած քարերի կոյտին քով, երեք քիւրդ ադամարդիկ կ՝աշխատին մերկացընել մի գեղջկուհու, հազիւ 17–18 տարեկան։ Սա օձի նման սողալով դուրս կը պրծնի քրդերի ձեռքէն. վերջիններս կրկին կը բռնեն նրան և կուզեն հասնել իրենց ժանտ նպատակին։ Գեղջկուհու զօրութիւնն էլ սպառած կ՝երևէր, որովհետև մաքառելու ճիգերը գնալով կը թուլանային և նա շատ չանցած՝ անձնատուր պիտի լինէր...

Երիտասարդն արդէն վճռել էր իր անելիքը, բայց ինչպէ՞ս վարուելու էր, որ չարագործների փոխարէն հայ աղջկան չ՝սպանէր։

Սակայն միւս կողմէն տեսնելով, որ երկար սպասելն էլ օգուտ չի բերեր, գոտիէն հանեց տարճանակը, ուղղեց դէպի սրահի կեդրոնը և արձակեց։

Գնդակը, բարեբաղդաբար, չի շեղուեց իր նպատակէն, նա ցրուեց քրդերէն մէկին ուղեղը...

Միւս քրդերը՝ տեսնելով այդ անսպասելի ադէաը՝ նախ մի բոպէ շփոթուած նայեցան միմեանց և հուսկ յետոյ գիմեցին իրենց զէնքերին, որ գրած էին քարակոյտին վրայ։ Հազիւ վեր էին առել նոքա իրենց հրա-

ցանները, երբ երիտասարդի երկփող սարբ-
ճանակն որսաց երկրորդ անգամ և սեղն
ուտելը շանսատակ արաւ երկրորդ թշնա-
մուն, որը աջ քունքէն էր ստացել մահա-
բեր կապարը...

Այնու ամենայնիւ երրորդ քրդուն յաջո-
ղեց մերկացնել իր դաշոյնը և կայծակի ա-
րագութեամբ յարձակուել դարանամուտ երի-
տասարդին վրայ։ Վերջինս էլ, տեսնելով որ
հրացանի գնդակը շեղուեց իր նպատակէն,
իսկ նորն էլ լեցնելու ժամանակ չ՝պիտի ու-
նենար՝ զիմեց իր դաշոյնի օգնութեան և
դուրս եկաւ սիւնի յետևէն...

Տարակոյս չ՝կայ, որ քիւրտը կը սպանէր
երիտասարդին, որովհետև քրդերը դաշոյ-
նամարտութեան մէջ անհամեմատ ընդունա-
կութիւն ունին, քան աշմուշատցի Հայերը,
որոնք թէև զէնք բանեցնելու շնորհք ունէին
և ունին, բայց երբ գործը դաշոյնի դար՝
քրդերի հետ չէին կարող մրցել երբէք։

Այդ քրիթիքական բոպէներին՝ բորբոք-
ուած, կրակ կարած գեղջկուհին քաշեց ին-
կած քրդերէն մէկին դաշոյնը և դրանով
այնպէս իջաւ քրդու ձախ կողքին, որ վեր-
ջինս մի ահեղ անբոց արձակեց և կոծնե-
ցաւ մօտն եղող սիւնին... Հայուհին նոյն

մոլեգնութեամբ իջաց և երկրորդ հարուածը միևնոյն ուղղութեամբ և ամեն ինչ վերջացաւ...

Հնագարեան ապարանքը իր աւերմունքէն ապին գուցէ առաջին անգամն էր, որ իր սրբաւաշ քարերը կը ներկէր բարբարոս թշնամու պիղծ արիւնովը...

Եւ հին դատաստանասրահում, երկար դարերէ ի վեր ամայի մնալէ յետոյ, այսօր կը լուծուէր բուական բարդ մի խնդիր, այսօր Հին Հայոց դատաստանասրահում արդար հատուցումն կ'սատնային երեք չարագործներ!

Հայաստանի պայծառ արեգակը իր ոսկեշող ճառագայթները կ'ուղարկէր՝ լուսաւորելու ապարանքի խաւար անկիւնները։ Իսկ բարձրուզէշ սոսիների վրայէն ազատ թռչնիկները կը գայլայլէին և իրենց ճուղիններովը, կարծես, Երկնքէն ոյժ և զօրութիւն կը մագթէին երկու հայ հերոսների բազկին ու սրտին...

III.

Ապարանքում տիրող խորին լռութեան միջին երկու արիւնակիցները ուրախութեան արտասուքն աչքերին՝ կը գրկախառնէին և կրծքերի բուռն սեղմումով շնորհակալ կը լինէին իրարմէ, որ ազատեցին միմեանց կեանքը անխուսափելի կորուստէն։

— Շնորհակալութիւն, ազնիւ պարոն, կը շշնչար աղջիկը, — որ վրայ հասնելով՝ պաշտպանեցիր իմ պատիւը և զիտատպատ գետին գլորեցիր ճիւաղներին...

— Քեզ պէտք է շնորհակալութիւն յայտնել, թանգագին քոյրիկս, — կը պատասխանէր երիտասարդը մի ջերմ համբոյր դրոշմելով նրա ճակատին, — որ առիթ տուիր ինձ իմ նուիրական պարտականութիւնս կատարելու...

Գեղջկուհին իր սքանչելի դէմքովը նման էր այն յաւերժահարսներին, որոնք երբեմն դուրս գալով Վարդենեաց — Հովտի միջէն՝ կ'այցելէին Հայութեան անցեալ փառքի մեծաշուք վիճակներին...

Նրա երկար ու խիտ սև վարսերը ցրիւ էին եկած նազելի իրանին վրայ և քամու մեղմ ալիքների միջոցաւ երբեմն–երբեմն կը զարդարէին նրա զարդացած կուրծքը։ Աշմուշացու հիներին յատուկ սաթանման խոպոպիկների մի քանի օղակներ կը խաղային նրա՝ թիւրեկ, բայց և կայտառ ու գրաւիչ դէմքին վրայ, որտեղ կը նշմարուէին երկու խոշոր, հմայիչ աչքերը, զալամով քաշած սևորակ յօնքերը և շառագոյն այտերն ու կենսատաւ շրթունքները՝ մայիսեան վարդի վառ գոյնովը...

Նա հագել էր իր բարձր հասակին վայել երկար պարեզօտ, որ պատրաստուած էր տեղական խատ (Khad) կոչուող մանուսայէ և կը հասնէր մինչև ոտքերի երեսը։

Քղանցքների ու թեքերի ծայրերը շրջթայանման և եռանկիւնաձև ասեղնագործած էին գոյնզգոյն մետաքսաթելէ եզրազարդեր։ Դրանք ցոյց կու տային որ գեղջկուհին հասարակ տան զաւակ չէր։ Նոյնը կը վկայէր և նրա ծոպը, որ հիւսած էր բամբկի գոյնզգոյն թելերէ և կը ծառայէր զօտիի տեղ և որը մի քանի անգամ բոլորելով հանդերձ նրա սիրուն մէջքը՝ ծայրերը կը կախուէին մինչև գետին։

Բայց ով էր նա և ինչ գործ ունէր այս-տեղ։

Նաճարան գիւղացի Մելիք Մուրատի աղ-ջիկն էր նա, որ այդ օր «ճաշուայ հացը» կը տանէր գաշտաւորներին։ Ճանապարհին, երբ նա կ'անցնէր «Օրրաշայ» (Միջագետ) կոչուող հողաբաժիններէն և կ'երթար Քուր-տրքան գիւղի սահմանները, որ տեղ կ'աշ-խատէին այդ օր նրանց բանուորները, — այդ-տեղ հանդիպեցին նրան երեք քրդերը և փախցրին մինչև այն ապարանքը։

Նա շատ լացեց, աղաչեց, որ բաց թող-նեն իրեն՝ երթայ իր գործին, — քրդերը չ'լսեցին նրան և կը կամենային յաղեցնել իրենց վայրագ կրքերը...

Քրդերը Սայիտ Պէկի ծառաներէն էին և վաղուց ասիթ կը փնտռէին ձեռք ձգելու չքնաղ մելիքուհուն, այդ գիտէր և վերջինս ու միշտ զգոյշ կը մնար։ Բայց այդ օրը տանը ոչ ոք չ'կար իրմէն զատ, որ գաշ-տաւորներին հաց տանէր։ Այդ պատճառով էլ նա յանձն առաւ այդ գործը և որսացուեց։ Դուք տեսէք Աստուծոյ բանը, թէ ինչպէ՞ս որսը որսորդ դառաւ...

Թշելով երեք քրդերի բոլոր զէնքերը՝ երի-տասարդն ու գեղջկուհին ուղղուեցան դէպի

Նաճարան։ Արևը մայր կը մտնէր, երբ նոքա հասան Նաճարանի ջրաղացներին, որ կ'իյնան գիւղի հարաւային կողմը՝ մի բարձր զառիվայրի վրայ՝ շրջապատուած գեղեցիկ պարտէզներով ու անվերջ այգիներով։

Առաջին հանդիպող պարտիզի ցանկապատին մօտ կանգ առին նոքա։ Այդտեղ երիտասարդը՝ քրդերէն խլած զէնքերի մէջէն մի սիրուն ատրճանակ և մի գաշոյն ուիրելով գեղջկուհուն՝ ասաց լրջօրէն.

— Օրիորդ, ահա կ'ընծայեմ քեզ մի ատրճանակ և մի գաշոյն, որոնցմով դու այսուհետև պէտք է պաշտպանես քու անձն ու պատիւը։ Դու, ի հարկէ, չափահաս և խելացի աղջիկ ես ու այլոց խրատին էլ կարօտ չես։ Դու պէտք է համոզուած լինիս, որ ինչպէս արական՝ նոյնպէս և իգական սեռի մարդիկ, որպէս Ասիայում կամ Ցանկաստանում ապրող մարդ, կարիք կ'զգան մշտական ինքնապաշտպանութեան։ Իսկ այդ բանի համար անհրաժեշտ են զէնք կոչուող այս գործիքները... Եթէ ինչպէս փորձով տեսայ՝ Աստուած քեզ տուել է և ոյժ և խելք, եթէ նրա այդ շնորհների արժէքը չգիտենաս, թուլամորթների նման գլուխ ծռես մեզ շրջապատող քրդերին առջև, — նոքա կը խլեն

քեզմէն այն ամենը, ինչ որ քո անբռնաբարելի իրաւունքն է — պատիւ, կեանք, տուն, սատցուածք... Բոլորովին աւելորդ կը լինի ասել, որ բրդերն էլ մեզ նման մարդիկ են և նոցա առաւելութիւնը կը կայանայ նրանում միայն, որ պողպատը — դա Ասիայի Աստուածն է — իրենցմէ անբաժան կը պահեն միշտ և դրա շնորհիւ ազատ են...

— Շնորհակալութեամբ կ'ընդունիմ, ասաց օրիորդը՝ երիտասարդի ձեռքէն զէնքերն ընդունելով, — և կը խոստանամ ինձմէն անբաժան պահել դրանց։ Այսուհետև դրանց շնորհիւ ազատ կը լինիմ ես և կը սատկեցնեմ անիծեալ խէթ աչքով ինձ նայել յանդգնողին... Կը սատկեցնեմ, այո, և չեմ վախենար նոյն իսկ զարհուրելի դժոխքէն, որովհետև աւելի դաժան է ձակատի բաց և անարատ պատուով դժոխք գնալ, քան արքայութիւն — անպատիւ և ամօթալեզ...

— Ապրիս, քուրիկս, այդ համոզմունքովդ իսկապէս դու կը լինիս կատարեալ հայ—քրիստոնեայ... Թող ոչ ոք չ'կարծէ, թէ չարագործին պատժելով կարող է դժոխք գնալ...

— Պարոն, ես դրանում համոզուած եմ, բայց կը մնամ եմ, թէ ինչ կը լինէր մեր

գրութիւնը, եթէ ամենքս հետևէինք այն մրա-
քին, թէ ներկայ դարում երջանիկ օր տես-
նելու համար մարդիկ պէտք է դիմեն միայն
և միայն կուրտուրական ապառազինուրեան։
Մինչև մեր դէմինը, որ՝ կուլտուրայի մա-
սին ամենատարրական հասկացողութիւն ան-
գամ չունենալով՝ մեզ ցոյց կու տայ փայ-
լուն պողպատ և գրանով միայն կը մաքառի
մեզ դէմ, — այդ չեն հասկանար մի որոշ
կարգի մարդիկ և աջուձախ «կուլտուրա»
կը գոչեն...

— Բայց դու, օրիորդ, սկսեցիր խօսք
բանալ երկար խօսակցութեան առիթ ուող
խնդրի մասին, մինչև մենք բաժանուելու
ենք արդէն։ Ա՛ռ այժմ ուրեմն մնաս բարով,
յուսով եմ, որ մենք դարձեալ կը տեսնուենք
և երկար կը խօսինք իրար հետ։

— Իսկ ո՞ւր կուզես գնալ այսպէս դիշեր
ժամանակ... Էս յատկապէս կը խնդրէի, որ
այս դիշեր հիւր լինէիր մեզ մօտ, որով ան-
չափ կ'ուրախացնէիր ինձ և հօրս...

Դեռ խօսքը չէր աւարտած աղջիկը, երբ
նրանց մօտեցաւ՝ ոտքէն մինչև գլուխ զին-
ուած մի երիտասարդ, որը տեսնելով աղջ-
կան՝ գոչեց ուրախացած.

— Ա՜ւ էիր, այս 5–6 ժամ է՝ քեզ
կը փնտռեմ։

Եւ նախ քան քրոջ պատասխանելը՝ երիտասարդին նկատելով՝ ասելացրեց մի քիչ վրդովված ու կասկածանոք.

— Իսկ այս երիտասարդն ո՞վ է և ինչ գործ ունի քեզ հետ...

Աղջիկը չ՝պատասխանեց, զգալով որ եղբայրը կասկածով կը նայէր այդ տարօրինակ ու անսպասելի երևոյթին վրայ։

— Ասա, Սիրանույշ, կրկնեց նորեկը՝ մի սպառնական նայուածք ձգելով երիտասարդին վրայ, — ասա՝ ո՞վ է այդ պարոնը և այսպէս ուշ գիշեր ժամանակ ի՞նչ գործ ունի քեզ հետ... Դէ՛, ասա՛...

— Ի զուր այդպէս կասկածանքով կը խօսիս, Գաբրիէլ եղբայր, — պատասխանեց աղջիկը՝ բռնելով եղբօր ձեռքէն, — երբ լսես այսօրուան ինձ հետ պատահած դէպքը և երբ գիտենաս, թէ այդ պարոնը որպիսի՜ անձնուրացութեամբ փրկել է քո սիրած քրոջ կեանքն ու պատիւը, վտանգի ենթարկելով իր անձը, — շատ ու շատ պիտի զղջաս քո անտեղի կասկածամտութեան վրայ... Ծանօթացիր նրա հետ և խնդրէ, որ ընդունի մեր հիւրասիրութիւնը...

Գաբրիէլը քրոջ խօսքերի վրայ հանդարտուեց մի քիչ և տուեց իր անուն — մանկանունը։

— Հրաչեայ Հայրապետեան, Սարիղամիշ գիւղախմբի Կենափի գիւղացի — պատասխանեց օտարականը և տեղական սովորութեան համաձայն ձեռքը կրծքին դնելով թեթեւակի խոնարհեց գլուխը։

— Կենափի գիւղացի... բացականչեց Գաբրիէլը զարմացած. — ես թէև անձամբ չեմ եղել այդ գիւղում, բայց հայրս, լաւ կը յիշեմ, մի քանի անգամ ասել է մեզ, որ Պ. Թափառականը լաւ ընդունելութիւն է գտել Կենափիում... Հայրս կը հաւատացնէր մեզ, թէ Կենափիում լաւ — լաւ տղերք կան, որոնք հակառակ են այն մրաքին, թէ հայ գիւղացին միայն մաճով ու մանգաղով պիտի հեռաքրքրի և նրանցով զբաղուի միայն...

— Իրաւ է, թէ Պ. Թափառականն ունի մեր գիւղում համակրողների մի փոքրիկ շրջան, բայց հազիւ թէ այդ շրջանը ձեր հօր կարծածի չափ առաջ գնացած լինի. իսկ դուք վաղուց և ի մօտոյ ծանօթ էք ձեր յիշած պարոնին հետ։

— Վեցերորդ տարին է այս, ինչ նա կերթայ կու գայ մեր գիւղը և համարձակ կարող եմ ասել, որ հայրս նրա ամենաառաջին ծանօթն է, որ սրանից կը համա-

կրի նրա քարոզութիւններին ու գործունէութեան եղանակին...

— Հըմ... ես լսել եմ ձեր հօր մասին... կարծեմ «խոհեմ» մարդիկ մի տաբօրինակ մակդիր են կցել նրան...

— Բոլորովին ճշմարիտ... «խոհեմների» լեզէոնը նրան մկրտել է «Անասուած» անունով... Եւ այդ այն պատճառով, որ հայրս ճանապարհորդելով բազմի բերմամբ Ամերիկայում ու Եւրոպայի մի քանի երկրներում՝ համարձակուել է խրատներ մի քանի մարդկանց համոզումներ, որոնք մեր «խոհեմ» հայրենակիցների աչքում շատ խորթ, շատ արատոց երևոյթներ են...

— Հասկանալի է... նա «Անասուած» է, որովհետև, երևի, նա այնպէս չի պաշտեր Աստուածուն, ինչպէս ուրիշները կը պաշտեն... Պաշտամունքի ձևերի տարբեր լինելն է նրան այդ անունով մկրտել տալու շարժառիթը...

— Բայց գնանք, տղերք, ընդմիջեց Սիրանոյշը, — ինչպէս կ'երևի՝ դուք միմեանց կը հասկանաք արդէն և դեռ շատ էլ խօսելիք կը գտնէք... Դու, Հրաչեայ, ոտտիկ յոգնած ես և հանգստութեան կարիք ունես, ուղիղն ասած, ես էլ...

— Գնանք, այս ասաց Գաբրիէլը և ուշադրութիւն չդարձնելով Հրաչեայի Կենտրի գնալու ցանկութեանը՝ ստիպեց նրան, որ հիւր լինի իրենց մօտ։

Հրաչեան էլ անձաբացած՝ ընդունեց նրանց հիւրասիրութիւնը և երէքով ուղղեցան գէպի գիւղ։

IV.

Լուսնեակ գիշեր էր։ Լրիւ լուսինը բարձրանալով Հայաստանի կապուտակ երկնակամարին վրայ՝ իր փոքրիկ ուղեկիցներով այնպէս կը լուսաւորէր աշխարհը, որ կարծես ցորեկ էր։

Աշմուշատեան կենսատու զեփիւռի զովութիւնը և շրջակայքի բուսականութեան եղեմական բուրմունքը ծծելով՝ Մելիք Մուրատի տան բակի գնէն ներս կը մտնէին Սիրանույշը, Հրաչեան և Գաբրիէլը։

Խիստ ընդարձակ բակում կը հանդստանային հարիւրաւոր կենդանիները — գոմէշ, կով, եզ, էշ, ձի, ջորի են, — իւրաքանչիւր

տեսակը գաս–գաս բաժանմունքներում կապտած։ Բակի մի մասում, որը կիսով չափ ծածկուած էր, թառած էին բազմաթիւ ընտանի և ընտելացրած թռչուններ – հաւ, բազ, ազաւնի, սագ, կաքաւ... նոյն իսկ և մի քանի հնդկահաւեր, որոնք եզական նոր բաներ էին այդ կողմերում։

Բակէն ներս կը բացուէին մօտ 30 դռներ, որոնցմէ կ'անցնէին ձմեռ ժամանակ կենդանիք՝ ախոռները գնալու համար։ Իսկ յարդանոց–մարագները ախոռների եաեի մասերը կը գրաւէին։ Միով բանիւ նոցա տան ներքին յարկը յատկացուած էր կենդանեաց և նոցա ապաֆիսի – յարդ, խոտ, առուցա, քուշնայ, ֆիդ, պոյ–պոյ, ճուլպանա, եգիպտացորեն, բամբկի հունդ (սերմ), էնէկէշէք, շուշմայի (կնջուխ) և կտաւատի տակունք, դարի, վարսակ, սև սիսեռ, կաղնու տերև, քուսպ, շիւ, խորշունք, մրեղ, գազ[1] և այլ տեսակ պաշարեղէններ, որոնցով ձմեռը կը կերակրեն աշմուշատցիք իրենց սիրելի կենդանեացը։ Դրանց հետ միացած և աշալուրջ

1. Սրա արմատէն կ'ելնէ ամենաքնաիր խէժը–քիրրէ–խակ ցոգունը–գազ, – որ խիստ դառն մի փուշ է, շատ կը սիրեն կենդանիները և դրանով շատ էլ կը գիրանան։

խնամատարութեան շնորհիւ է, որ Աշմուշատի հայ գիւղերում դուք չէք հանդիպիր մի լղարած կամ փչացած կենդանու։ Այդ կողմէն Բալուի հայ գիւղերը կարող են օրինակի տեղ ծառայել շատ ուրիշ տեղերի մօտ, ուր մարդիկ կ'ուզեն օգուտել իրենց անասուններէն, սակայն փոխադարձ խնամքը կը զլանան նրանց. բայց այդ թողնենք։

Մելիք Մուրատի տունը կը բաղկանար երկու յարկերէ և կանգնած էր 30-ի չափ ամրակառոյց քարուկիր սիւների վրայ։ Աշմուշատում հայ գիւղացոց տներն առ հասարակ քարաշէն կը լինին, բայց Մելիք Մուրատի տունը դրանէ զատ ճաշակաւոր մի շէնք էր։

Երկրորդ յարկը կը բաղկանար տասնաւոր սենեակներէ, որոնցմէ 2 փոքրերը սանդուխի գլխին կը ծառայէին որպէս բնակարան բազմաթիւ զամիոներին, որոնք նրա տունը և կենդանեաց հօտերը կը պահպանէին երկոտանի և չորքոտանի թշնամիներէն։ Մնացեալները զանազան մեծութեամբ սենեակներ ու դահլիճներ էին, ուր կը ճոար Մելիք Մուրատի բազմանդամ գերդաստանը։

Լուսամուտներէն ոմանք, տեղական սովորութեան համաձայն, կը բացուէին հողա-

ծածկ տանիքներէն՝ ունենալով հաստ երկաթէ խաչաձև վանդակ ու ճաղեր։ Մի քանիսն էլ, որ նորութիւն էր այդ կողմերում, կը բացէին պատերին մէջ։

Իսկ տանիքները (կտուր) սանդուխի նման իւրաքանչիւրը քսվինէն 2–3 ոտնաչափ բարձր էր, որովհետև տունը կառուցած էր մի բլրակի լանջքին վրայ։

Առաստաղները ծածկուած էին նախ հաստ գերաններով, ապա նոցա վրայէն շարեշար մարդակներով, որոնց վրայ լքցրել էին խիճ և «կարմիր հող»։

Պատերը ծեփած էին «կաղճի» կոչող կապտագոյն և մածուցիկ հողով։ Ցառակը նոյնպէս շաղախուած էր մոխրախառն ցեխով, որը չորանալէ յետոյ ցեմենտի նման կամուրտայ և կարելի է յդկել, կոկել նրան մարմարիոնի նման։

V.

Այն մեծկակ սենեակն, ուր առաջնորդեցին քոյր և եղբայր իրենց երիտասարդ հիւրին՝ մէկն էր այն ընակարաններէն, որոնց մէջ ապրող մարդիկ կարող են առիւծներ դառնալ, եթէ զուրկ չեն զրանք կենսական ուրիշ պիտոյքներէ։

Սենեակի արևելեան և հարաւային պատերին մէջ բացուած մեծկակ լուսամուտներէն — զուրկ ոչ շրջանակէ և փեղկէ — ներս կ'իյնային ծառերի պաղալից ճիւղերը, որոնց տերևների սօսափիւնին միացած մերձակայ առուի անուշ կլկլոցը և թռչնիկների զայլայլիկը՝ մի հրաշալի ներդաշնակութիւն կը կազմէին և կարծես կը փառաբանէին Մայր-Բնութեան խնկելի Դախանամոլին։

Լուսաբացի մեղմիկ զեփիւռը ազատ կը սահէր լուսամուտներէն ներս և իր հետ կը բերէր Աշմուշատեան դաշտերի և լեռների քնքշաբոյր ծաղկանց անուշիկ բուրմունքները։

Աքաղաղներն արդէն վեր էին կացրել ժրաջան հայ գեղջուկներին, որոնք առի զուլալ ջրով երեսները լանալէ և ջերմեռանդութեամբ գէմքերը խաչակնքելէ յետոյ կշտապէին վաղորդեան գործի գլուխ։ Ամբողջ գիւղը շարժողութեան մէջ էր։ Կեանքը եռ կու գար ամեն կողմ։

Օրը կը լուսանար շուտով, բայց Մելիք Մուրատը, Գաբրիէլը և Հրաչեան դեռ նստած էին և երկարօրէն կը խօսէին՝ Պ. Թափառականի, նրա արծարծած մտքերի, հայ շինականի հազար ու մի ցաւերի մասին։ Արդէն առաջին տեսակցութիւնէն և մի քանի լակոնական հարցուփորձէն Մելիք Մուրատը ճանաչել էր Հրաչեային, որի հայրը քիչ ժամանակ առաջ մօտիկ շփման մէջ էր եղել Մելիք Մուրատին հետ։ Նրանք հասկացել են միմեանց։ Ընդհանուր վիշտը կապել է նրանց սրտերն իրար հետ՝ շնորհիւ Պ. Թափառականի, որը Ռուսաստանի խորերէն իր հետ բերել էր ճշմարիտ գիտութեան պաշտելի փշրանքներ և տարածել այդ կողմերում...

Դրան քիչ չէր նպաստել և Մելիք Մուրատի երկարամեայ պանդղութիւնը և ուղևորութիւնները Հին և Նոր աշխարհներում։

Հրաչեան ու Գաբրիէլն էլ պակաս չէին իրենց հայրերէն։

Այդ պատճառով էլ խօսակցութեան անսպառ նիւթ կար, որի և ոչ մի մասը, սակայն, մաղաչափ կապ չունէր նրանց անձնական բաղդի կամ վշտի հետ...

Ի միջի այլոց Բիւրտ Պէկն էլ փոքր անհանգստութիւն չէր պատճառեր նրանց ըզգայուն սրտին։

Բիւրտ Պէկ... Ո՜հ, որքա՜ն սրտաճմլիկ արտմանների ծնունդ էր տուել այդ ահռելի գազանը — Մելիք Միսաքի երեկայ քաղցած ծառան... Նա իր արիւնռուշտ ճիրանները խրել էր հայ գեղջուկի կրծքի է՛ն խորերը ու սև արիւնով լցրել այնտեղ...

Քանի՜ — քանի երիտասարդ ուժեր՝ այսօր նրա ապիկար ծառայութեան մէջ արնաքամ կը լինէին...

Քանի՜—քանի անմեղ հայուհիներ՝ այսօր կը լեցնէին այդ խենէշի հարէմը և արտունջի նշոյլն անգամ ցոյց տալու իրաւունքէն զրկուած՝ զոհ կը դառնային նրա վաւաշոտ կրքերին...

Քանի՜—քանի ընտանիքներ՝ այսօր կը տապալէին այդ հոգէառի ճանկերում...

Եւ այդ ամենը համաձայն Ցաճկաց բա-

բեմնում կառավարության բազմապիսի հրահանգների !

Հապա «Վաղը» — դեռ ինչ՞ը ասէք չէին կարող պատահել գլխակոր հայ գեղջուկի հետ. չէ՞ որ Բիւրա Պէկը նորանոր ծրագիրներ կը կազմէր, որպէս զի Նաճարան գիւղի պաշտօնական տէրը — «աղան» դառնար և այնուհետև ազատ ասպարէզ տար իր սանձարձակ գազանութիւններին...

Դրանք հարցեր էին, ընթերցող—ճան, որ երկար կը զբաղեցնէին ոչ միայն Հրաչեայի և նրան հիւրասիրողների միտքը, այլ և բոլոր — այսպէս ասած — Թափառականների միտքն ու ուղեղը...

Եւ մի զարմանար, որ վերոյիշեալ սքանչելի բնակարանում «անաստուածները» քնել չէին կարող:

Բիւրա Պէկն արդէն ծրագրել էր՝ Նաճարանում կառուցանել իր համար սեպհական ապարանք: Այն ատեն Աստուած միայն գիտէ, թէ ինչ կը լինի ողորմելի Նաճարանցոց դրութիւնը...

Կային մարդիկ, որոնք կը կարծէին, թէ Սայիա Պէկը չ'իրագործեր իր ծրագիրը, բայց Մելիք Մուրան համոզած էր, որ երբ մի անգամ Սայիա Պէկի գլխէն անցած է մի

այդպիսի միաք՝ այդ բաւական է, որ այսօր վաղը իրականութիւն դառնայ այդ միտքը... Եթէ միայն՝ նաճարանցիք չ'մտածեն ասնել մի դրական քայլ, որը սահման դնէր Սայիտ Պէկի անզուսպ կամայականութիւններին և գործած ու գործելիք սխրագործութիւններին...

Իսկ նաճարանցի հայը — այդ վարուեցող, համակերպուող, ամեն մի ոտնձգութեան դէմ լռող նախիրը — ինչպէս պիտի ասնէ այդ «քայլը», որին արտասանելը շատ հեշտ է, մինչդեռ գործնականութեան մէջ այդ քայլը կը պահանջէր ունենալ ամբողջ գիւղի դրական կամքը, ցանկութիւնը և անմիջական օժանդակութիւնը, առանց որոնց «քայլը» կը մնար սոսկ երազ...

Շուտափոյթ վճռի կարօտ այդ ծանրակշիռ հարցը, դժբաղդաբար, միայն «անասուածների» դէմ կը ցցէր, միայն նրանց դէմ, այո, որովհետև Նաճարան գիւղը մի վիթխարի բոյն էր դարաւոր սարկութեան...

Ուրեմն ինչ կը մնար անել «անասուածներին». — կամ ձեռքերը ծալած հանգիստ խղճով սպասել վրայ գալիք պատուհասներին և կամ անձնատուր լինել բուն թափառականներանութեան գաղափարին, որը կը քա-

ղողէր «կամ Կեանք պատուաւոր և կամ Մահ հերոսական»։

Երկու կողմն էլ ծայրայեղութիւններ։ Միջին ճանապարհ գոյութիւն չունէր։ Մենք յետոյ կը տեսնենք, թէ այդ երկու ծայրայեղ կողմերէն ո՞ր մէկն ընտրեցին մեր ոնք...

VI.

Դախտաճաշիկէն յետոյ Մելիք Մուրատն առանձնացաւ մի ուրիշ սենեակ՝ 1–2 ժամ հանգստութիւն տալու իր յոգնած մարքին ու մարմնին։ Դա միաժամանակ պատուիրեց Գաբրիէլին, որ հիւրասենեակում տեղաշորեր փռեն հիւրին համար և նրան էլ հանգըստացնեն։

Ինչ էլ որ լինի՝ բնութիւնը իրենը կը պահանջէ, այնպէս որ՝ չ'նայած Հրաչեայի վատ տրամադրութեան՝ նա գլուխը բարձի դրաւ թէ չէ, քուն եղաւ։

Կէս օրուան մօտ էր, երբ Հրաչեան աչքը բացեց և տեսաւ, որ օրիորդ Սիրանոյշը ջրա-

ծիկն ու կոնքը ձեռքին, մաքուր անձեռոցիկն էլ ուսին՝ մաաւ հիւրասենեակ։

— Ի՞նչ կանես, օրիորդ, հարցուց Հրաչեան՝ քնաթաթախ աչքերը տրորելով և զարմանալով որ օրիորդն իրեն կը ծառայէ։

— Ոչինչ... եկայ բարի օր մաղթելու իմ թանգագին հիւրին և իմանալու՝ ի՞նչ կը հրամայէր, որ յօժարակամ ծառայէի իրեն...

— Այդ էր պակաս, օրիորդ... ես երբէք չէի սպասեր, թէ դու ինձ հիւրի տեղ կը դնես... Գիշերուան մեր խօսակցութենէ պարզ երևաց, որ հայրդ մօտիկ ծանօթութիւն ունի իմ հօր հետ և նրանք մտերիմ բարեկամներ են... Այժմ իմ հօր բարեկամի յարկին տակ ես կաշխատիմ այնքան անխոհեմ լինել, որ չընդունիմ ձեզմէն որևէ մէկի մաղաչափ ծառայութիւն ինձ... Ուրեմն, խնդրեմ, նեղութիւն կրէ վար դնել ջրածիկը, կոնքը, անձեռոցիկը և թոյլ տալ, որ ինքս լեցնեմ և ինքս էլ լացուիմ։

— Լա՜ւ տրամաբանութիւն է... դեռ երէկ էր՝ դու յանձն կ'առնէիր աւերակում թափել քո արիւնը ինձ համար, եթէ ես այսօր իմ հօր տան մէջ փափաքիմ ջուր ածել քո ձեռքին՝ մե՞ծ ծառայութիւն մատուցած կը լինիմ...

— Ա՛յ, հէնց նրանումն է խնդիրը, որ «այնտեղ» աւերակ էր և ես պարտաւոր էի չ'ինայել իմ անձնական ծառայութիւնը քեզ, որպէս արիւնակից մարդու, մինչդեռ այստեղ մի տուն է, ուր կարող եմ մի ժամ լինել այնպէս, ինչպէս կը լինիմ իմ տանն ամեն օր։

— Սակայն, պարոն...

— Լսի՛ր, օրիորդ, «սակայնները» աւելորդ են, դու այն ասա՝ հայրդ և եղբայրդ վե՞ր են կացել արդէն, թէ չէ։

— Հայրս արդէն 2 ժամ է, ինչ վեր է կացել և կ'աշխատի տան առջևի պարտիզումը. իսկ եղբայրս քո պառկելէն յետոյ գնաց իր գործին։ Երկուսն էլ շուտով տուն կու գան։

— Հա՜, կը տեսնե՞ս ուրեմն, որ դու եկել ես ծիծաղելու իսկապէս իմ ծուլութեան վրայ... Խորամանկ աղջիկ...

— Ի հարկէ, պարոն, ինչ ասել կուզես... ինքդ խոստովանեցար քո ծուլութիւնը... Բայց ես էլ պակաս չեմ քեզմէն... Երկուսս էլ մէկ սանրի կտաւ ենք... իսկապէս շատ լաւ ենք գտել իրար...

Ասաց նա և ծիծաղելով դուրս վազեց՝ միտքը գնելով, որ երբ Հրաչեան հասնի՝

ինքը կու գայ անպայման և ջուր կը լեցնէ իր կեանքն ու պատիւն ապատող ձեռքերին։

Բացի այդ որքան էլ ծանօթ – բարեկամ ուզէ՝ լինի հիւրը, ինչո՞ւ չպէտք է տան աղջիկը ջուր լեցնէ նրա ձեռքին։ Հայի այդ հնաւանդ սովորութիւնը ցոյց կու տայ, որ եղել է ժամանակ, երբ հայ կինը կամ հայ աղջիկը իրաւունք է ունեցել համարձակ նայելու իր արիւնակից ազատարդու երեսին։ Ինչո՞ւ չ'պահպանել այդ սովորութիւնը։

Մանաւանդ որ հիւրը Հրաչեան է, այսինքն այն երիտասարդը, որին Սիրանոյշը որպէս ազատարարի սիրելի զաւակ՝ դեռ մի ուրիշ Սիրոյ էլ ներկայութիւնը կզգայ իր մէջ հեազհեազ...

Եւ, իրօք, մի քանի բոպէ յետոյ նա վերադարձաւ իր սիրոյ առարկային մօտ, երբ սա արդէն հագուել էր և ինքն իրեն կը լացուէր։ Մի փոքրիկ, զաւեշտախառն բանակռիւ ևս, և Հրաչեան ընկճուեց յամառ օրիորդի կամքին առջև ու յուզած սրտով ընդունեց նրա ծառայութիւնը։

Իսկ այդ թոյլատուութիւնը, եթէ գիտենայիք, որքան ուրախացրեց սիրավառ օրիորդին։

— Ա՜յ, այդպէս, կասէր վերջինս յաղթական ժպիտով, – դու չէիր կարող ար-

գելել անել ինձ այն, ինչ որ կը թելադրէ հոգիս...

— Դէ լաւ, լաւ, — կը պատասխանէր երիտասարդը կատակով, — այդքան էլ մի հպարտանայ, կարծելով թէ յաղթանակ ես տարել մի կարգին աղամարդու դէմ... Դու պէտք է գիտենաս, որ քո ախոյեանը մի հէք պատանի է, որին ոչ ասես՝ կարող է յաղթել...

— Ոչ թէ հէք, այլ մի սէգ կարիճ, որ երէկ առիւծանման քրտերին գիւցազնաբար վար կը գլորէր իր ոտքերին ներքև...

— Թող այդպէս լինի... Տուր անձեռոցիկդ... Բաւ է...

Եւ այդպէս՝ ուրախ — զարթ խօսակցելով, հանաքներ անելով՝ դուրս եկան հիւրասենեակէն ու անցան կողքի մեծկակ սենեակներէ մին, որ «չաղանոց[1]» կը կոչուէր և ուր այդ բոպէին մի ազգակցող իրարանցում կը տիրէր։

Մտնելով չաղանոցը՝ նրանք տեսան, որ 20-ի չափ մեծ ու փոքր երեխաներ, խաղակ չարաճճի, մեծերի նման կը վիճային այդտեղ։ Երեխաներէն մի քանիսը սասակի

1. Չաղա = մանուկ, չաղանոց = մանկանոց։

չարացած էին մի հազիւ 10 տարեկան մանչու գէմ, որը իր հասակէն էլ երկար մի փայտ առած ձեռքը՝ անխնայ կը հարուածէր միւսներին, ինչոր չնչին պատճառէ գրգռած։ Այդ էլ էր ազմուկի և իրարանցման միակ շարժառիթը։

Հալածուողներէն մի քանիսը՝ չդիմանալով չարաճճի բռնակալի անողորմ ծեծուփէտին՝ կը գոռային.

— Է՜, շատանա՛յ Հրմպօ, թէչկ գուն... իլիտունը թոյ մենճ–պապան տուն գա՛յ, օյ թուն ալ թեշնաշ... Ըմսկէշ ճեճիլ տանթ օյ՝ տաշիտ էլլայ...

Ոմանք կու լային, ոմանք էլ աւելի մօտիկ պաշտպանին – մայրիկին – օգնութեան կը կանչէին.

Մամա՜... մամա՜... թէժ էյը... Հաշի՜յ... թէժ... հաւա՜ր... խոխի էշ Հրմպօն միժի տր ճեճը... մամա՜... վա՜յ, վա՜յ, վա՜յ...

— Երեի այսօր Համբարձումը (Հրմպօն) սովորականէն աւելի է չարչրկել երեխաներին, – նկատեց Սիրանույշը լրջօրէն, – որովհետև նա թէև միշտ էլ չար է, ուժեղ ամենքէն և միշտ էլ կը չարչարէ նրանց, բայց նոքա՝ մին միւսին հետ ուրիշ գտաւեր ու հաշիւներ ունենալով և Հրմպօին իրենց կողմը

որսալու համար՝ կը լսեն նրա բռնակալութեան դէմ... Ներքին, մանր հաշիւները այս փոքրիկների մէջ էլ մեծ դեր կը խաղան և չեն թոյլ տար, որ հալածուողները մի բոպէ մտածեն ընդհանուր տուշմանին դէմ... Եթէ գործը ուժի գայ, հաւատացէք, որ 10 Հրմպօի կարող են ծեծել... Բայց հաշիւներ կան մէջ տեղումը...

Զօրութիւն էր հարկաւոր, ծիծաղը զսպել կարողանալու համար, երբ տանտիկինը՝ փոքրիկների ճիչ ու աղաղակէն ձանձրացած՝ մտաւ չաղանոցը և հալածուողներին ասաց.

— Զաղուկներս, ձեզմէն ոմ որ ձեր հանդստութիւնը կը վրդովէ՝ դուք ինքներդ պէտք է նրան խելքի բերէք... Թէ չէ «մամա, մամա» կանչելով ինչ դուրս կու գայ... Դուք էլ Հրմպօի պէս ձեռք ու ոտք ունիք...

— Լա՛ւ դատաստան է, մայրիկ, ասաց Հրաչեան և համբուրեց տանտիկնոջ ձեռքը, որը դուրս գնաց։

Էլ երեխաներն իրար ընկան և սկսեցին իրենց փոքրիկ–փոքրիկ բռունցքներով թակել, գմփել չար Հրմպօի գլխին ու կողքին։ Բայց փոխանակ ազմուկը դադարելու՝ աւելի ևս զօրացաւ. այժմ յաղթական աղաղակներ

էին, որ կը բարձրանային խառն սպառնալիքների ու վիրաւորանքների հետ։

— Հա՜, տեղա՛ց, շե՛ղ շատանա՛ց Հրմպո, ապէշ թըլոյրա՝ որ չայթինթ հա՜... Ցէ՛, հիմի տայնա՛ղ նը՝ տէ՛նէ հնութինա էյը... Ցիտի՛ շէնի այու թէօփէա...

Խե՛ղճ Հրմպո, երեւակայել անգամ չէր կարող իր գլխին այդպիսի փոթորիկ... Մէկի՛ի ձգած ձեռքի բիրը, գլխարկը նոյնպէս կորցրած՝ կծկուել էր մի անկիւն քոնձոտ կատի նման և այնպիսի խղճալի դիրք էր բռնել, որ նրան տեսնել ու չկարեկցել անկարելի էր...

Հրաչեան մօտեցաւ նրան՝ սատանելով ապտամբներին՝ շոյեց նրա գոռոզ գլուխը և ասաց.

— Գնա՛, Համբարձում — ճան, գնա՛, հեռացիր այստեղէն։

Ցաղթահարած գոռոզը ուղեց ցոյց տալ իր յամառութիւնը և սկսեց ոտքերով գետինը ծեծել և ասել.

— Չէ, չեմ՝ ուզեր երթալ, թող փայտս ու քուլլահս տան...

— Ցնաշէ՛ն, վրայ բերեց Սիրանոյշը, — գուրս փախիր, թէ չէ՝ հիմա շապիկդ էլ կը խլեն վրայէդ...

Վերջապէս համոզուեց Հրմպօն և յուսա-
կրաւոր, գլխիկոր դուրս գնաց մանկանոցէն
և այնուհետև ուրախութեան աղաղակներ
միայն կը լսէին նախկին հաշտեալներէն։

VII.

Դուրս գալով մանկանոցէն՝ Սիրանոյշը
Հրաչեային առաջնորդեց մի ուրիշ սենեակ,
որին կարելի էր անուանել Գաբրիէլի և Սի-
բանոյշի առանձնասենեակը, որովհետև քոյր
և եղբայր իրենց ազատ ժամանակները այդ
տեղ կը պարապէին։

Դա մի քառակուսի սենեակ էր՝ սպիտակ
բարակ տախտակամած — առաստաղով, որի
չորս անկիւններում դնուած էին մի — մի
հրեշտակի գլխանկար։ Առաստաղի կենտրո-
նումը աչքի կիյնար հետևեալ «յիշատա-
կարանը», որ սովորաբար կունենան Բալուի
կողմերում բոլոր բնակարանները.

«Ես, Բալվայ տիրախնամ գաւառի Նա-
ճարան գեղջ Հայոց մելիք Մանկասարս, իմ
սեփական միջոցներով բակեցի և վերանո-

ըզեցի այս իմ հօրենական տունս, որ Երկրաշարժի տարին փլչաց էր. այս տանս մէջ կայ 38 աչք[1]. 2 աչք մեծ օճաղլուխ[2], 3 մաղ օտա[3], 3 մաղ քիլար[4], 2 մաղ թոնիրտուն[5], 3 մաղ նէմ սուռֆա[6], 1 մաղ չարտախ[7], 8 մաղ ամպար, 1 մաղ չաղանոց. տակի խաթն[8] ալ ախոռ ու մարագ Քրիստոսի թվին ՌՊ... ին։ Տր. Յս. Քր. Ամ. իմ 129 զլուխ գերդաստանս պէքէտէր[9] պահէ, որ բնակինք...

Յիշատակարանս գրեց Վարի Վարդենիկ գեղի տիրացու Աստուրը»։

Յիշատակարանը գրած էր, կլոր գիրքով, եղենի յգկուն տախտակի վրայ սև թանաքով և երկաթագրի ձևով. իսկ մէջ տեղը մի մեծ, ոսկէզօծ է գրած։

Ադանձնասէնեակի պատերը բաւական կոկիկ ծեփած էին ճերմակ կաւով («պիտկրնոդ»), որ գուրս կու գայ քրդաբնակ Ճառռ գիւղի մօտն եղող հանքէն և ունի կրային բաղադրութիւն։

1. Աչք կամ մաղ կը կոչի տան իւրաքանչիւր սենեակը։ 2. Դահլիճ։ 3. Հիւրասենեակ։ 4. Մառան։ 5. Թոնիր, ուր հաց կը թխեն։ 6. Սեղանատուն։ 7. Դատիկոն, պալքոն։ 8. Յարկ։ 9. Անվանագ։

Հիւսիսային և հարաւային պատերին վը-
բայ շինած էին մի-մի «ճրագդիր», որոնց
վրայ կաւէ կանաչ ճրագների փոխարէն կը
փայլէին մէկ-մէկ արոյրէ ոսկեփայլ մոմա-
կալ, դեռ ևս անվառ մոմերով, որոնք պա-
տրաստուած էին Մելիք Մուրատի հարսների
ձեռքով մաքուր մեղրամոմէ։ Միևնոյն պա-
տերէն կախուած էին զանազան որսորդական
պարագաներ ու զէնքեր։

Իսկ արևմտեան պատէն կախուած էր բիբ-
լիական տապանը կրող Աբրատի խղճտերկ
պատկերը, որ բաւական ճարտարութեամբ
նկարել էր Մելիք Մուրատն իր երիտասար-
դական տարիներում, երբ դեռ արտասահ-
մանումն էր։ Այդ գեղեցիկ նկարի վրայ կը
ներկայացնէր հսկայ Մասիսը և նրա ձիւ-
նապատ գագաթին վրայ — Նոյի տապանը,
որ արևի առաջին շառայլներով ոսկեզօծուել
և հրաշալի մի տեսք էր ստացել։ Տապանի
կիսաբաց պատուհանէն ցած սլանալու վրայ
էր բանբեր Աղաւնին...

Յատակի $^3/_4$ մասը կը գրաւէր մի գեղե-
ցիկ գորգ, որի երեք կողմերը կը լրացնէին
մի-մի նեղլիկ՝ բայց հիանալի կապերտներ։
Մելիք Մուրատի տան հարսները իրենց
մատների շնորհքը ցոյց կու տային՝ այդ

գորգի և կապերանների խիստ վարպետ գործ-
ուածքով։

Պատերին հետ փռել էին երկար ու փե-
տրալից ներքնանոցներ (տեսչեկ) և նրանց
վրայ էլ շարել էին գորգեայ երեսներով եր-
կար բարձեր։

Դէպի տան առջևի պարտիզակը նայող
քառակուսի լուսամուտներին մէջ գրել էին
մի–մի «քարազ» գեղին կաւէ ծաղկամաններ, որոնց վրայ քանդակուած էին հոգևոր
տեսարաններ։ Քարազների մէջ անկել
էին մի–մի արմատ բաղմաճիւղ գիշերածաղիկ (կիձէ–սեֆա)։

Գորգի կենտրոնումը դրած էր մի ցածլիկ
աթոռ և նրա շուրջը մի քանի պարզ աթոռներ, որոնց վրայ նստան Հրաչեան ու Միրանոյշը և շարունակեցին ընդհատուած խոսակցութիւնը։

VIII.

Այդպէս ուրեմն, կասէր Հրաչեան, — դու համաձայնում ես հակառակ գնալ մեր կողմերում սրբազործած այն կարծիքին, որ ուսումն ու կրթութիւնը պէտք է անմատչելի լինին իգական սեռին։

— Այո, կը պատասխանէր Սիրանոյշը, — շնորհիւ իմ սիրելի հօր, որ ամբողջ աշխարհաշատցիների աչքի փուշն է դառել իր անդրհայաստանեան հայեացքներով, — շնորհիւ նրան ես հնարաւորութիւն ունեցայ ձեռք բերելու այն, ինչ որ պէտք է սեփականութիւնը լինէր մարդկային երկու սեռին հաւասար չափով և որը, սակայն, մարդիկ կը զլանային մեզ, կարծելով թէ կարդալ-գրելը պէտք է հոգևորականների մենաւաճառը լինի ընդ միշտ, ինչպէս ասկէ առաջ եղել էր հայերիս մէջ...

— Իսկ վաղուց սկսել ես սովորել։

— Մօտ մի տարի է։

— Միայն։

— Այո՛, մի տարի միայն. որովհետև

լուսահոգի մայրս անգամ միացած մեր տան բոլոր անդամների հետ, բացի հօրմէս և եղբօրմէս, կը պնդէին որ անհպատակայարմար, նոյն իսկ անվայել բան է աղջկան գրել – կարդալ սորվեցնելը... Բայց հայրս երկար ընդհարումներէ յետոյ անխախտ մնաց իր վճռին մէջ և եղբօրս խնդրեց, որ օրական 1–2 ժամ պարապի ինձ հետ՝ հօրս արտասահմանէն բերած մի քանի գիւրամարս ձեռնարկներով։ Այդպիսով մի քանի ամսուան ընթացքում ես արդէն կարողացայ շատ թէ քիչ ծանօթանալ այն Հողին հետ, որի վրայ կը մնանք մենք և որը մի ժամանակ մեր նախահայրերի սեփականութիւնն է եղել...

— Կը խնդրեմ որ շարունակես, օրիորդ, շատ հետաքրքիր է քո պատմութիւնը։ Գոչեց Հրաչեան ոգևորուած և զգալով որ իր ներքին աշխարհումը տեղի կունենայ մի մեծ յեղափոխութիւն։ Մի յեղափոխութիւն, որի ազդեցութեան տակ նա կը տրամադրուէր սիրել այդ էակին, մի մաքուր, անկաշառ սիրով սիրել և մնալ մշտական բարեկամ նրա հօր ու եղբօր հետ։

— Նախ, շարունակեց օրիորդը, – մի հարթ տախտակի վրայ գրուած հայկական

տառերին ու նոցա հնչիւններին ծանօթացայ։ Այդ տեւեց 10 օր միայն։ Այսպա եղբայրս տուեց ինձ մի փոքրիկ, ձեռագիր տետրակ, որի մէջ ինձ ծանօթ տառերով գրուած էին հայկական գետերի, լեռների, թագաւորների, իշխանների, նշանաւոր հոգևորականների, քաղաքների ու գիւղերի և այլ յատուկ անուններ, որոնց ես սովորեցի բերանացի և կարող եմ այժմ էլ մի առ մի թուել...

Ա՜խ, պարոն Հրաչեայ, ի՜նչ փոթորիկներ են անցել այդ խեղճ անուանների գլխէն, որոնց մտաբերելով կը խելագարւիմ ես...

Երբ մանաւանդ կը մտածեմ՝ ինչպէ՞ս երբեմնի շէն ու պայծառ, բազմամարդ հայաքաղաքները այսօր կամ աւերակ են դառել և կամ զրկուել են իրենց Հայ բնակիչներէն, որովհետև մեր անխիղճ դրացիները ծառի տերևների նման թօթափել և ցրուել են Հայ ժողովրդին... Որքա՞ն կոտորել, որքա՞ն հրի, սրի ու ջրի են զոհ արել... Դրանց հետ միացած և անաքանդ գաղթականութիւնները — անմիջական հետևանք կրօնի, կեանքի և իրաւունքի անապահովութեան, — հիմնայատակ արին այն սրբազան Երկիրը, որ կարող էր այսօր մի Նոր Շէյյարիա դառնալ,

եթէ դրա բնիկ աչքերը հնարաւորութիւն ու-նենային զարգացնելու իրենց կուլտուրական կեանքը...։ Հայրս ու եղբայրս ինձ սովորեցրին, որ մեր բնաշխարհի սահմաններն էին՝ արևելքէն – Մարաստանն ու Պարսկաստանը, արևմուտքէն – Փոքր Ասիայի մանր իշխանութիւնները, հիւսիսէն – Աղուանքը և Վրաստանը, հարաւէն – Բաբիլոնը, Ասորեստանը և Ասորիքը։ Դոքա քաղաքական սահմաններն են։ Իսկ բնական սահմանները՝ արևելքէն – Կասպից ծովը և Իրանի սարահարթը, արևմուտքէն – Փոքր Ասիան, հիւսիսէն – Սև Ծովը և Կովկասեան լեռնաշղթան, հարաւէն – Միջագետք և Միջերկրական Ծովը...։ Հապա Հայաստանի բնական հարստութիւնը – պտղաւէտութեամբ, մետաղների գեղեցիկ անմշակ հանքերով, վայրենի և ընտանի և տարագնաց թռչուններով, բազմատեսակ ձկներով ու բոյսերով, ընտիր և առատ ջրերով, առողջարար կլիմայով և այլն և այլն... կը տեսնեմ որ այսօր ճիւաղ գրպերն ու թուրքերն են նրան տիրողները և այդ ամբողջ բարիքների վայելողները... իսկ խեղճիկ հայ–քրիստոնեան իրաւունք չունի նրանէն օգտուելու, նրան ծաղկեցնելու, մշակելու և մարդկութեան աւելի ու աւելի պիտանի դարձնելու...

Երբ կը մտածեմ այդ ամենը՝ աչքերս կը լեցուն դառնաղի արտասուքով ու կոկսիմ անիծել զազանարարդ մարդակերներին, անիծմ՛լ և մեր սև Օրը, մեր քօր բաղդը, որ մեզ ժպտալ չ'գիտէ...

Երբեմն նոյն իսկ կը զղջամ կարդալ — գրել սովորելուս վրայ, որովհետև դրանց միջոցաւ ես ծանօթացայ այս կոկծալի մանրամասնութիւններին... Թէև առաջ բոլորովին տգէտ էի, բայց գոնէ այսպիսի անտանելի կրակ չէր իյնար ներսս ու չէր հալեր, մաշեր, մոխիր դարձներ թշուառ սրտիկս...

Գիտե՞ս, սիրելիս, Պ. Թափառականը կասէր որ մի ժամանակ Հայերի թիւը 30 միլիոնի կը հասնէր, իսկ այժմ... Երկի՞նք — երկի՛ր, ինչպէ՞ս համբերեմ, ինչո՞վ մխիթարիմ ես... Ինչպէ՞ս զուրս քաշեմ սրտիս զէմ լերդացած արիւնը, որ մի բոպէ մխիթարիմ...

Խե՛ղճ Հրաչեայ, բերանը բաց մնաց տղին. լսածները մեծաւ մասամբ նորութիւններ էին իրեն համար, նորութիւններ, որոնք նրա աչքերէն զուրս ցայտեցուցին մի քանի մարգարտափայլ կաթիլներ և դրանց շնորհիւ աւելի զօրեղացաւ այն զգացումը, որ բոյն կը գնէր նրա ներսի դին...

Նա խոբին յափշտակութեամբ բռնեց օ-
բիսրպի ձեռքը և երկիւղածութեամբ մօտե-
ցուց իր շրթունքներին։

IX.

— Օրիսրպ, դու ինձ կը զարմացնես, որ
մի տարուան մէջ կարողացել ես այդքան
առաջ գնալ։

— Արդէն սովորածս շատ քիչ բան է,
Հրաչեայ, և զարմանալու էլ տեղիք չ'կայ
ընաւ, երբ ի նկատի ունենանք եղբօրս ինձ
վրայ ի գործ դրած մեծ աշխատութիւնը։
Եթէ չես ձանձրանար՝ ես երկու խօսքով կը
պատմեմ, թէ ինչպէս է նա սովորեցրել ինձ։

— Խնդրեմ, խնդրեմ, հետաքրքիր է...

— Լաւ։ Ուրիշների գործի գնալէն 1–2
ժամ առաջ նա վեր կը կենար տեղէն, կը
նայէր իմ դասերը, կը փոխէր, մի կատ էլ
ազգային պատմութենէն և Հայաստանի աշ-
խարհագրութենէ կարդալով՝ կը խօսէր, կը
պատմէր և նոյնը ինձ կրկնել կու տար։
Մինչև որ միւս գործաւորներն էլ վեր կե-

նային, որոնց կը միանար եղբայրս և կեր-
թար իր գործին։ Ինձ էլ կոսիպէր, որ աշ-
խատանքի ժամանակ գործէս յետ չմնամ։
Մեր ընտանիքի բոլոր չափահաս անդամների
համար պարտաւորեցուցիչ է՝ աշխատանքի
որոշ ժամերում գործելը։ Ամենքը ջանասէր
և ժիր մարդիկ են, որոնց շնորհիւ կը վա-
րեն փառաւոր կեանք, ունին առողջութիւն
և ամրապինդ կազմուածք... Մեր գերդաս-
տանը թէև այժմ առաջուան նման բազման-
դամ չէ, բայց քչւոր էլ չենք — ուղիղ 100
հոգւոց կը բաղկանայ։ Մեր տան տղամարդ-
կանց պետը, կամ նահապետը, հայրս է,
իսկ կանանցը, մօրս մահուանէն յետոյ,
յանձնուած է մեծ հօրեղբօրս կնոջը — «Մադ-
թաղինէ — մամային»։ Այդ երկուին կը հնա-
զանդին մեր գերդաստանի բոլոր անդամները
և այդ երկուի ձեռքումն է մեր տան կառա-
վարութեան դեկը։ Սակայն չնայած դրան՝
ես դեռ կեանքումս մեր տնեցոց մէջ որևէ
անբաւականութիւն նշմարած չեմ, և այդ
շնորհիւ միայն և միայն այն հանգամանքի, որ
մեր տան մէջ — ինչպէս բոլոր նահապետական
տներում — ոչ մի խարութիւն գոյութիւն չու-
նի, կը տիրէ ամեն բանի հաւասարութիւն
և համերաշխութիւն... Իմ կարծիքով վատ

չէ մեր նահապետական տան և այս նախ-
նական օրէնքը, որ ընտանիքի անդամներէն
բաժանել ուզողը և կամ բաժանման ասիմ
ուզող անպայման կը զրկուի իր ժառանգու-
թիւնէն և, բացի հագուստներէն, ոչինչ իր
հետ վեր առնելու իրաւունք չունի։ Մինչ-
որ զղջայ իր արածին վրայ և դայ — հպա-
տակուի տիրող օրէնքին. այդ տեղն նա ար-
դէն կընդունուի տան մէջ, որպէս անբաժան
անդամ... Հա՛ — ես հեռացայ նպատակէս, —
կուզէի ասել, որ եղբայրս երեկոները տուն
հասնելուն պէս՝ կը վազէր ինձ մօտ և՝
բազդը ժպիտն երեսին, որպէս և դուն քրբ-
տինքը ճակատին՝ կ'սկսէր պարապել ինձ
հետ, մինչև ուշ ժամանակ... Այս մի անգամ
կատակի ձեւով հարցրի.

— Ասա՛ ինձ, սիրելի Գաբրիէլ, ինչո՞ւ
միշտ կը ջանաս շուտ վեր կենալ և ան-
պատճառ գործաւորներին հետ գործի գնալ
և ոչ 1—2ժամ յետոյ...

— Քոյրիկս, պատասխանեց նա լրջո-
ւթեն, — կը հասկանամ միտքդ՝ ասել կու-
զես ուրեմն շատ մեծամ քեզ մօտ, որպէս զի
աւելի էլ շատ բան սովորիս, բայց պէտք
է ասեմ քեզ, որ թէև ուսումն ու կրթու-
թիւնը մարդոց համար օգտակար և խիստ

պիտանի բաներ են, սակայն դրանց հետ զուգընթացաբար պէտք է առաջ գնայ և՛ ֆիզիքական աշխատանքը։ Այն ատեն միայն մենք բաղդաւոր կը լինինք... Եթէ հայ մարդը չունենար իր պատմական ջանասիրութիւնը, ո՞վ գիտէ թէ մենք ուր կը լինէինք այսօր... Բայց հայը՝ ապրելով հանդերձ քաղաքական ամենատաղնապալից պայմանների մէջ՝ շնորհիւ իր օրինակելի ջանասիրութեան կարողացաւ մինչև այսօր պահպանել իր գոյութիւնը... Հայրս կը պատմէ շատ անգամ, որ հայը ամեն տեղ ճակատիրաց կը պարծենայ իր այդ յատկութեամբ... Այժմ հասկանալի՞ է, թէ ինչու՞ կը ջանամ գործի ժամանակ ուրիշներէն յետ չմնալ, մանաւանդ որ յետ մնալով վատ օրինակ էլ կը հանդիսանամ համշիրակնեբիս առջև...

Բառերը պերճախօս էին, ես հասկացայ նրան, և այնուհետև միայն ազատ ժամերում կը պարապէինք մենք։ Այնու ամենայնիւ այդքանն էլ բաւական էր մեզ համար։ Երանի՜ թէ ամեն եղբայր Գաբրիէլին չափ աշխատէր կրթել ու զարգացնել իր բրոջ միտքը։ Այն ատեն մենք չէինք ունենար «Հայ–Աղջիկ» կոչուող երկասանի կա-

վերի լեգէոնը, որի վրայ մարդիկ կը նային որպէս տան կարասիի, որպէս մի շարժուն առարկայի վրայ... Բայց խիստ դան իրա-կանութիւնը ցոյց կու տայ, որ հայ երի-տասարդներն աւելի խօսքի մարդ են, քան շօշափելի գործի... Ես կը տեսնեմ, որ յա-ճախ երիտասարդ մարդիկ, մանաւանդ Պ. Թափառականի ներկայութեամբ, բոպէական ոգևորութեան մէջ «կեցցէ» կը գոչեն և այդ ապարդիւն բացականչութեան վրայ կաւ-լացնեն որևէ սուրբ բառ կամ անուն։ Բայց որ այդ բառը կամ անունը մեզմէ կը պա-հանջեն շատ խօսելու և շատ բղաւելու փո-խարէն գործ տեսնել՝ այդ մասին, ժիրաղ-դարար, մտածողները շատ քիչ են...

Հրաչեան խորին յափշտակութեամբ կը լսէր բորբոքած, կրակ կտրած օրիորդին, որը իր կուսական մաքուր սրտէն քաղելով այդ խօսքերը՝ կը թափէր նրա առջև՝ տա-կայն առանց մտածելու, որ իր այդ խօսքե-րովը կը ծակէր և Հրաչեայի սիրտը, որ-պէս հայ երիտասարդի...

Վերջինս կ'զգար, համոզուած էր, որ իրա-ւունք ունէր օրիորդը։ Որովհետև հայ երի-տասարդներէն քանի՞սն էին մտածել օրիորդի

արծարծած մաքերին վրայ։ Շատերն էին աշխատել իրենց քույրերի և կամ ամուսինների մտաւոր հոբիզոնն ընդլայնել։ Շատերն էին ըմբռնել այն տարրական իրողութիւնը, որ երջանիկ ընտանիք և հետևարար երջանիկ ազգ ունենալու համար անհրաժեշտ էր կրթել, դաստիարակել իգական սեռին ազգային հոգւով և հնարաւորութիւն տալ նրան՝ արական սեռի հետ ձեռք–ձեռքի և սիրտ–սրտի տուած՝ գործ տեսնելու, գեղեցիկ ապագային գիմելու... Այնտեղ, ուր մարդիկ պիտի կանգնէին իրենց կոչման բարձրութեան վրայ և պիտի դառնային արժանաւոր անդամներ՝ յառաջադէմ, լուսաւորեալ և ազատ մարդկութեան...

Հրաչեան ինքն էլ ունէր 2–3 քույրեր – կոշտ, կոպիտ, անտաշ էակներ, որոնք սակայն կարող էին ուրիշ կերպ լինել, կարող էին Սիրանոյշներ դառնալ, եթէ... նրանց ծնողքը կամ եղբայրը մտածէին նրանց կրթութեան մասին...

Եւ այդպէս քանի՜ հազարներ կամենաք հայերիս մէջ...

Մանաւանդ Բաղուի կողմերում, վաղո՞ւց հետէ, հայուհին ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի խրաւիլակ՝ բոլոր մարդկային և անհատա-

կան իրաւունքներէն զրկուած մի դասակարգ, որ դատապարտուել է մշանջենական ամլութեան... Մինչեւ հայ ցեղի իսկական սեռն այդ կողմերում օժտուած է բնութեան առատ ձիրքերով, որոնց շնորհիւ նա կարող էր մեր Երկրի և Ցեղի երջանկութեան ուշադրաւ նիւթերէն մին դառնալ, եթէ միայն՝ մարդիկ մտածէին խելացի, նպատակայարմար եղանակներով մշակել, արդիւնաւորել այդ բնատուր ձիրքերը և հազուագիւտ ընդունակութիւնները։

1895 թուի տխրահռչակ աղէտների ժամանակ ես իմ անբաղդ ծննդավայրում — Բաղու քաղաքում — և շրջակայքում ականատես եղայ մի շարք բնորոշ եղելութիւնների, որոնք ինձ հասցրել են այս եզրակացութեան, որ այդ կողմերի շատ թէ քիչ զարգացած, գրի սեռն սպիտակէն ջոկող հայուհին աւելի կարիճ տղամարդ է, քան բուն «տղամարդիկը»։

Թող իմ սիրելի ընթերցողները ներեն ինձ բերել մէկ երկու օրինակ. որպէս զի իրենք էլ համոզուեն իմ ասածներիս մէջ, որ, իրօք, բաղուցի հայ կինը շատ տղամարդիկներէ բարձր է կանգնած պարտաճանաչութեան ասպարիզում։ Այհա.

— 50–60,000 քրդերէ բաղկացած ըստ առաջէն ամբոխը միացած թուրք պաշի – պոզուքների և օսմանեան կանոնաւոր զօրքերի հետ՝ յարձակում կը գործէին Բալու քաղաքին վրայ։ Այդ դէպքը տեղի կունեցաւ 1895 թ. նոյեմբերի $^{1}/_{14}$–ին, առաւօտեան 10 ժամին (ըստ Եւրոպ.). դրանէ մի շաբաթ առաջ, այն է՝ հոկտեմբերի 24–ին, արդէն գործուել էր առաջին գօրեղ յարձակումը, որով քաղաքի միայն ստորին՝ դեռատինեայ ս. Կիրակոսի թաղը ենթարկուեց յարձակողների գազանութիւններին։ Մնացեալ 3 հայկական թաղերը ազատ մնացին այդ օրը՝ շնորհիւ հայ կանանց ոգեորիչ խօսքերի և սպառնալիքների, որոնցով նրանք սախկեցին իրենց ազատարդկանց՝ պաշտպանել իրենց տունն ու պատիւը։

Բայց նոյեմբեր 1–ի գօրեղագոյն յարձակումով արդէն թշնամուն յաջողւած էր մուտք գործել քաղաքի բոլոր հայկական թաղերը... Մինչդեռ ազատարդիկ՝ յուսահատուած ու լքւած՝ կը մտածէին անձնատուր լինելու մասին միայն, անդին հայ կանայք և աղջիկներ տեղացի հայ վարժուհու (այժմ հանգուցեալ) նախաձեռնութեամբ կը վճռէին՝ օրինակելի քաջասրտութեամբ մաքառիլ բազմաթիւ թշ-

նամուն դէմ մինչև վերջին շունչ և մինչև արեան վերջին կաթիլը...

Ես բաղդ ունեցայ ականատես լինելու այդ պաշտելի Հերոսուհիների վերին աստիճանի նշանակալից ու սրտաշարժ «ս. Երդումի արարողութեանը», որով Նրանք ինձ կը յիշեցնէին Ե դարի «Հայոց աշխարհի փափկասուն Տիկնայքը»...

Թշնամին անթիւ բազմութեամբ պաշարել էր, ի միջի այլոց և Մեծկերտցոնց տունը, ուր այդ միջոցին կը մնար Վարդանոյշ անուանով ինձ հասակակից (16–17 տարեկան) մի օրիորդ, որը դեռ կը սովորէր Հայոց Միացեալ ընկերութեան Բալուի Իգական վարժարանում: Չնայած որ Վարդանոյշի հայրը, մայրը և մօտ 10 հոգի այդ տանը ապաստանողներէն սպանուած, վար էին ինկած Օրիորդի կողքին և կարկտի պէս տեղացող գնդակները կ'սպառնային Նրա կեանքին՝ այնու ամենայնիւ Նա մոլեգնութեամբ կը կռէր հազարաւոր թշնամեաց դէմ ու իր շուրջը կը փռէր տասնեակ թշնամիների սատակներ...

Մինչև որ մէկ կողմէն ռազմամթերքը կը սպառէր, իսկ միւս կողմէն մի վիթխարի քրդու ահարկու սուրը վերջ կը դնէր չքնաղ

Հերոսուհու՝ 4 ժամ մաքառող և հերոսա-
բար պաշտպանուող կեանքին...

Նա մեռաւ զոհունակութեան ժպիտն երե-
սին և 16 հոգի թշնամիներէն կենսազուրկ
անելով...

Մի ժամ յետոյ ես ականատես եղայ մի
ուրիշ տեսարանի՝ ոչ-պակաս սրատենչիկ և
բնորոշ, քան միւսը։ — Հազիւ 25 տարե-
կան մի Կին, իր ամբողջ կարողութիւնը թա-
լան տալէն վերջը, կուրծքին կը սեղմէր մի
կապոց («չրխիհ»), որի մէջ կային մի քանի
օրինակ «Դատ», «Մշակ», «Արձագանք»...
և այլ արտասահմանեան թերթեր ու թըղ-
թակցութիւններ։ Շիկացած գնտակը կրծքին
մէջ խրելէն յետոյ գարձեալ կապոցն ամուր
կը սեղմէր Նա սրտին վրայ և այնպէս կը
փակէր բազմաչարչար աչքունքները... Նա
ունէր հազիւ 1 տարեկան մի երեխայ, որին
կարող էր աւելի շուտ սեղմել կրծքին վրայ,
բայց «Մեր Ցաւերուն վրայ մտածող ու
գրող «թղթերը» հաղար սրտի կարժեն» ա-
սելով կաւանդէր Հայ-Կինը իր հոգին...

Սրանք հէքիաթներ չեն, ընթերցող, այլ
մեր աչքին առջև, օր-ցորեկով կատարուած
իրողութիւններ, որոնք պարզ ցոյց կու տան,
որ մեր «ուհի» — ների մէջ սիրտ կայ,

անընկճելի մի հոգի կայ, որ կարող է հրաշքներ գործել, եթէ մենք գիտենանք նրանց արժէքը...

Սիրանոյշը լինելով մին այդպիսիներէն՝ կուզէր իր խօսակցին առջև պարզել հայ կընոջ բնաբաբած իրաւունքները, կրկնել այն, ինչ որ հազար անգամ ասել – քարոզել էր այդ կողմերում Պ. Թափառականը և որը սակայն մնացել էր միշտ «ձայն բարբառոյ յանապատի»...

X.

Քիչ յետոյ առանձնասենեակ մտաւ Գաբրիէլը և երեքը միասին ճաշելէ յետոյ իջան տան առջևի պարտիզակը։ Տանը կողքէն կը հոսէր մի կարկաչասահ առւակ, որի վրայ սասնեակ փայտէ կամուրջներ էին ձգած անցուդարձի համար։ Առւակի երկու կողմէն շարեշար կը բարձրանային սաղարթախիտ ուռիներ, բարտիներ և Մէյլբոյի (mèïleby) կոչուող հասարակ ծառեր, որոնց ճիւղերէն կախուած էին լուցքի շորեր։

Աուակի ձախ ափին վրայ կ'իյնար «Քար–Ազբիւրը», որ ֆշշալով դուրս կը ժայթքէր ախորժահամ ջուրն ապառաժի ճեղքուածքէն և այդ պատճառով էլ կը կոչուէր Քար–Ազբիւր։

Գիւղի տները թաղնուել էին հարուստ բուսականութեան մէջ, միայն ծխնելոյզների ծուխերէն կարելի էր հասկանալ որ տուներ կան այդ անվերջ ծառաստանում։ Խրաքանչիւր տան բակի մէջէն կշկշալով կը վազէին աուակէն դարձրած ջրերը. հարսներն ու աղջիկները փայտէ մեծ–մեծ շերեփներով այդ ջրերէն կը սրսկէին՝ ծառերի տերքն ցանուած զանազան ծաղիկներին ու բանջարեղէններին վրայ։ Ամեն մարդ իր տան առջև կամ բակի մի անկիւնումը ունէր՝ փշի ցանկերով բաղուած իր ծաղկանոցն ու բանջարանոցը, որոնք կը տարածէին իրենց շուրջը անմահական բուրմունքներ։

Ա՛ռ հասարակ բալուցիք սիրահար են բուսականութեան և իրենց բնակարանները՝ «կանաչով ու կակաչով, ծաղկով ու հոտով» շրջապատելու մեծ շնորհք ունին։ Մուրացկանն անգամ իր կանաչ–կակաչն ունի։ Բնութիւնն էլ՝ կարծես տեսնելով այդ սէրը բալուցոց մէջ՝ կ'օգնէ նրանց ամեն կերպ։

Բայց դուք Նաճարանում կը հանդիպէիք մի զարմանալի բանի — յիշեալ սիրունիկ ծաղկանոցների կողքին կը տեսնէիք դուք վառելափայտի և կշկուրի (ախաբ) դէզերը...

Նկատենք և այս, որ փողոցներէն անցնողն այնքան չէր նեղւեր գետնի թանձր փոշիէն, որքան անթիւ անհամար չարաճճի հաւերի և այլ թռչնոց երամներէն, որոնք անվախ — հանգարձակ կը թապլտկէին այդ փոշիների ովկէանոսում, ինչպէս անհերես շուները կը թապլտկին թուրքաց մայրաքաղաքում...

10—ի չափ հարսներ ու աղջիկներ բոպիկ սաքերով ու սոթամած արմուկներով մտել էին առուակին մէջ և այդտեղ քաղած ցօղունները էն խուրձերի զօտիներ կը պատրաստէին։ Մի քանիսն էլ լացք կանէին պաղ ջրով։ Լացատրների թակերի անկանոն ձայները կը նսեմանային մերձակայ ջրաղացի դղրդոցին մէջ...

Դաշտատրներն էլ հետզհետէ կը վերադառնային գիւղ, որովհետև այդ օրը վարդավառի շաբաթն էր, որ «կէս — կիրակէ» կը համարուէր, երեկոյեան էլ նախատօնակ կար եկեղեցում։ Այդ էր պատճառը, որ գնա

երեկոյ չ'եղած՝ ամենքը կը պատրաստուէին եկեղեցի գնալու։

Հոչակաւոր Մելիք – Տէրտէրը, Նաճարանի քահանան, քարոզ էր խօսելու ինչ որ «մեծ – նորութեան» մասին։

Մենք էլ մեր ընթերցողին հետ կը գնանք եկեղեցի և կը լսենք այդ քարոզը, բայց առ այժմ մենք հետևենք Սիրանոյշին, Հրաչեային և Գաբրիէլին, որոնք առանց ուշադրութիւն դարձնելու իրենց շուրջը վխտացող կեանքին ու տեսարաններին վրայ՝ մտան մելիքենց պարտիզակը։

Այո, փոքր էր այդ պարտէզը, բայց շատ սիրուն ու վայելուչ մի զբօսավայր կարող ենք անուանել նրան։

Պարտէզի մի կողմը Ջրաղացների անդրնդախոր ձորն էր, որ տեղէն գոռում–գոչումով կանցնէր Մեղրաբերդի – գետակի մի մեծ ճիւղը և կը գնար միանալու Արածանիին։

Միւս երեք կողմերէն կը բարձրանար մի մարդահասակ բարձրութեամբ հողէ պարիսպը։

Ներս մտնելով պարտիզակի կամարակապ դռնակէն՝ անցան երկու կարգ Եղևնիների մէջէն և գնացին դէպի պարտէզի կեդրոնը, որտեղ կը գտնէր՝ սալաքարերով շինած քա-

ատնկիւնի, մեծկակ աւազանը։ Աւազանի պսկանքներէն թափուող առատ ջուրը առանձին խճուղիներով կը ցրուէր պարտէզի զանազան մասերում և կ'ոռոգէր նրանց։

— Սրանք ընտիր տեսակի ծիրանիներ են, կասէր Սիրանոյշը՝ ցոյց տալով Հրաշեային մի ծառախումբ, որ աւազանի կողքին բաւական տեղ կը գրաւէր, — սրանց պտուղը յայտնի է իր խոշորութեամբ, ջրալիութեամբ և խիստ ախորժելի համով։ Այդ ծիրանները նշանաւոր են և՛ նրանով, որ կուտերը «խեսի» է (անուշ)։ Բիչ ներքև ունենք ուրիշ ծիրանիներ էլ, որոնց ծիրանը նոյնպէս պատուական է, սակայն կուտերը դառն են։

— Ձորի ափին գտնուող խիտ ծառախումբը շատ տեսակ տանձիներով է բաղկացած։ Իսկ նրանէ քիչ վերևում՝ խառն են՝ արուեստ, մօտ 6–7 տեսակ, զանազան խնձորենիներ, սերկևիլի, նուռի, բալի, սալորի, կեռասի, գոչոմրոյի (բանդա), թուզի, դեղձի... քիչ հեռուում՝ բրի, մանուխի, ընկոյզի... և այլ պտղատու ծառերի բազմազան տեսակները... Անդին՝ զառիվայրին վրայ՝ խաղողի որթերն են ու փշատենները, վանդենիներն ու «զեռնախնձոր» կոչուող բա-

բերեր թիթերը, որոնք կու տան մեծագոյն տեսակի սպիտակ և քաղցր խնձոր։ Կաղամախի, սօսի, կաղնի («փէքուբ») և այլ բազմաթիւ հասարակ, անպտուղ ծառերը — զրանք ձորի հերոսներն են, որոնք մեր պարտիզակի այդ կողմը կը պաշտպանեն Մեղրաբերերդի դեռակի գժութիւններէն... Պարտէզը շրջապատող սաղարթախիտ ուռիները իմ հօր սիրած ծառերն են, որոնց տաւերին տակ կը նստի յաճախ նա և կը կարդայ իր սիրած գրքերը...

Բայց Հրաչեայի ուշքն ու միտքը զրաղուած էր աւազանի շուրջն եղող մաքուր և գեղեցիկ ծաղկանոցներով, որոնց մէջ առանձնապէս աչքի կիյնային հետեւեալ ծաղիկները. Եարկիզ[1], սաբմաշուղ[2], մեխակ, ռաֆան, գիշերածաղիկ[3], մեղրածուծ[4], նուշնուշ

1. Թրք. զատիֆէ (թաւշածաղիկ?), որի տատնաւոր տեսակները կը լինին Բալուում։

2. Զանգակաձև ծաղիկներ կը բանայ, զանազան գոյներով, և ցօղունովը շատ նման է փաթաթուկ կոչուող անպիտան խոտին։

3. Թրք. կէճէ–սէֆա, որ կարմիր, երբեմն և խայտաճամուկ, փոքրիկ ծաղիկներ կու տայ հովանոցի ձևով։

4. Մանուշակագոյն ծաղիկ, որի կոնքում կը լինի մեղրահամ հեղուկ։

ֆար, ասպնծաղիկ [1], *տեղտ կամ տեօղտի-ծաղիկ* [2], *առտ-վարդ* [3], *ապրիմ-մեռնիմ* [4], *խնկիկ* [5], *արևածաղիկ, իշ-բաւիբօսիկ* [6], *աղբօր-արիւն, ձնձղկայ-պաշտառմ* [7], *պաձպաձուկ* [8], *առրբ կարապետու ծաղիկ, սնրաառամ ծաղիկ, են. են...*

Հրաշեան զմայլմամբ կը գիտէր՝ իրեն

1. Ֆիրանեգոյն, փոքրիկ ծաղիկներ, որ չորացնելէ յետոյ կը քսեն նոր թխելիք լաւաշի երեսը՝ անուշ համ և սիրուն գոյն տալու համար:

2. Բաց-գեղին գոյնով մի խոշոր ծաղիկ, որ կը գործածեն որպէս գեղ վէրքերի վրայ:

3. Յայտնիկի մի պարզ տեսակը:

4. Ղեսանի շուշան, որի թերթիկները մէկիկ-մէկիկ փետելով՝ կասեն բալուցիք. «ապրիմ, մեռնիմ» ամենավերջին թերթիկը փրցնելիս որ բառը, որ հարկ լինի ասել, այնպէս էլ կը լինի, իբր թէ փրցնողին հետ.— եթէ «ապրիմ» հարկ լինի ասել, կը նշանակէ, որ շատ կապրիս. իսկ եթէ՝ «մեռնիմ» — կը մեռնես շուտով. այդ պատճառով ծաղիկը կը կոչի «ապրիմ-մեռնիմ»:

5. Ազատքեղի նման մի խոտ է, որի ոսկէգոյն ծաղիկները խունկի հոտ ունին:

6. Թրբ. լալ, կակաչի մի տեսակը:

7. Աննշմարելի ծաղկուկներ ուսղ մի խոտ է, որին շատ կը սիրեն ուտել ծտերը:

8. Աղբօր-արիւնի նման մի ծաղիկ է, որմէն տեղացիք կապոյտ թանաք կը պատրաստեն, լաւ յատկութեամբ:

հիւրասիրողների անդուլ աշխատութեան և գեղասիրութեան արդիւնքն եղող այդ զեղեցիկ ծաղկանոցներին։ Նա չգիտէր՝ զրանցմէ ո՞ր մէկի վրայ կանգնալ ու ծծել, անյագօրէն ծծել անմահական բուրմունքները... Նրա սիրտը հրճւանքէն կուզէր նոր թռչուն դառնալ թռչնիկի նման ֆռալ, գուրս գալ կրծքին տակէն և դառնալ այդ ծաղկանոցների երջանիկ բնակիչ, վայելել նրանց հաճն ու հոտը, կշտանալ մի անգամ...

Նա ինքն էլ կապրէր բուսականութեամբ փարթամ Աշմուշատում, բայց Կենտափի գիւղում պարտէզները բնաւ չունէին այդ գրաւչութիւնները։ Պատճառ։ Որովհետև կենտափիցիները տեսած ու վայելած չէին անպրը-հայաստանեան ծաղկած կեանքը և չէին ենթարկուած նրա ազդեցութեանը, նրա բարեբար, յեղաշրջող, երջանկացնող ազդեցութեանը, ինչպէս Մելիք Մուրատն էր և նրա շնորհիւ զարգացած Սիրանոյշն ու Գաբրիէլը...

Ուրեմն, հաշւէն գուրս կու գար, որ խակական բաղդաւորութիւնը պէտք է որոնել ո՛չ թէ Ամերիկայի կամ Եւրոպայի բնութեան մէջ, այլ Եւրոպացու կամ Ամերիկացու լուսաւորեալ, ազատ կեանքին մէջ...

Ուրեմն Հրաչեայի Հայրենիքն Հայրենակիցներն էլ կարող էին բաղդաւոր ու երջանիկ լինել, եթէ բարեփոխէր վերջիններիս կեանքին պայմանները... Կամ ուրիշ խօսքով, եթէ թափառականութիւնը յաղթանակէր...

XI.

Հիմա ընթերցողին հետ գնանք Նաճարանի հռչակաւոր ս. Մինաս եկեղեցին, ուր այժմ առեղ ձգես՝ գետինը չի՛նար։ Վաղը Վարդավառ է՝ շատերը պիտի հաղորդին և դրա համար էլ շտապել են ներկայ լինելու նախատօնակի արարողութեանը, որ արժանի լինին ս. Հաղորդութեան։ Ս. Մինաս եկեղեցին, կարծես խորշելով աշխարհի աղմուկներէն, մեկուսացած էր Նաճարան գիւղէն և գնացած, տեղաւորուած էր գիւղի արևմտեան կողմը, մօտ $^3/_4$ վերստ հեռաւորութեան վրայ, ճոխ բուսականութեան կեդրոնումը։

Ցեռ՝ ինչ սիրուն շէնք է։ Նրան կառուցել են Ծոփաց Աշխարհի հայ իշխանները,

որպէս զի երբ ամաւան շրջերին ստիպուին մայրաքաղաքէն հեռանալ զէպի ամարանոցները, որոնցմէ մին էր Նաճարանը[1], արժանավայել եկեղեցւոյ մէջ աղօթեն Հայոց Աստուծուն։

Նրան շրջապատող անվերջ այգիներն ու պարտէզներն էլ հայ իշխաններն են յատկացրել այդ եկեղեցուն ի սեփականութիւն։ Դրանց վրայ աւելացան և մատնաւոր բարեպաշտ անձանց նուիրած կամ կտակած ջրաղացները և ընտիր – ընտիր վարելահողերը, որոնք զարերէ հետէ ս. Մինաս եկեղեցւոյ անձեռնմխելի (?) սեփականութիւնն եղան։

Բայց աւելի լաւ է՝ ներս մտնենք, այնտեղ ես ցոյց կու տամ իմ ընթերցողին՝ բնական ծաղիկներով զարդարուն մայր և

1. Սխալ է այն կարծիքը, թէ արդի Նաճարան գիւղը Հայոց հին պատմական Նահրնեար քաղաքն է։ Նայելով բանաւոր աւանդութիւններին՝ Նաճարան գիւղը ի հնուց ասած կրել է այդ անունը – Նաճարան – և եղել է Զորրորդ Հայքի գլխաւոր ամարանոցներէ մին և այդպիսի մի ամարանոց լինելու բոլոր արժանաւորութիւններն ունի, ուղիղն ասած, այդ գիւղը։ Ինչ կը վերաբերի Նրա երբեմն քաղաք լինելուն՝ գոնէ աւերակների հետքեր էլ չեն երևիր Նրա մէջ և քովերը, որ հաստատէին այդ բանը։

ժամանակ սեղանները, որոնց մէջ այժմ կը պլպլան հարիւրաւոր կանթեղներ ու մոմեր։

Ահա և մայր սեղանի (աւագ խորան) առջև, առաստաղէն կախած, ջայրաւի և արագլի հաւկիթները գոյնզգոյն ներկած, որոնք անյիշելի ժամանակներէ ի վեր նիւրական են համարեալ Հայերի աչքում, մինչ այն աստիճան, որ հեթանոսական դաւանանքներն ուրանալէ յետոյ էլ նրան պահել – պահպանել են քրիստոնէական եկեղեցոյ մէջ և որոնց առջև, իրենք էլ չ'գիտենալով ինչու, ջերմեռանդութեամբ կը խաչակնքեն հայ մարդիկ։ Ոչ պակաս երկիւղածութեամբ կը պաշտեն Բալուի հայ գիւղացիք և մարմարիոնէ շինուած խաղողի ողկոյզները՝ կարմիր, սև ու սպիտակ գոյներով, որոնք կախուած են առաստաղի կեդրոնէն։ Դրանք, այնքան ճարտարութեամբ էին պատրաստուած, որ եթէ եկեղեցում չ'լինէին՝ դուք կը փորձէիք ճաշակել նրանց։

Չ'գիտեմ՝ ինչ գործ ունէին եկեղեցում նոյն նիւթէն շինած տանձերն ու խնձորները, որոնք քաշ էին ինկած այս ու այն կանթեղին տակ[1]։

1. Մինչև մեր օրերը պահպանուած են հայկական եկեղեցիներում այդ սովորութիւնները։ Նոյն իսկ Բա-

Մեղք որ ժողովուրդը ինքն էլ պահպանած չէ որ և իցէ աւանդութիւն այդ առարկաների նշանակութեան մասին։

Նայեցէք եկեղեցու խաչաձև յատակին ու պատերին — ինչ սրբատաշ, ինչ հրաշալի քարեր են գործածել. եթէ դուք մտել էք Անի քաղաքի մայր եկեղեցին՝ ապա կարող էք զաղափար կազմել Նաճարանի ս. Մինաս եկեղեցւոյ շինութեան մասին, այս զանազանութեամբ, որ վերջինս աւելի մեծկակ է և աւելի ամրակառոյց...

Չի զբաղւինք, սակայն, միայն եկեղեցու շէնքով. մի քիչ էլ ուշադրութիւն դարձնենք ժողովրդի հոգ բազմութեան վրայ։ Ամենքն էլ զուգած — զարդարած են, ամենքն էլ ուրախ են և հրճւանքով կը լսեն դպիրների երգած «Որ ի լերինն այլակերպեալ» շարականը։ Նոցա դէմքերին դիտողը այնպէս կը կարծէ, թէ սրանք աշխարհիս երեսին

լու քաղաքի ս. Կիրակոս և ս. Սահակ եկեղեցիներում գրանք գոյութիւն ունէին. միայն ինանական թուականներին, երբ վերանորոգեցին յիշեալ եկեղեցիները՝ որպէս աւելորդապաշտութիւն՝ դուրս հանեցին եկեղեցիներէն թէ հաւկիթները, թէ պատուղները և թէ մի կարգ ուրիշ առարկաներ։ Բայց շատ գիւղերում դեռ մինչև այսօր էլ գործածական են գրանք։

ոչ մի ձախող օր տեսած չեն և, կարծես, հիանդութիւնն երդել է՝ չմոտենալ նրանց։— Աստդ, կայտառ, կարմրադէմ և հսկայակազմ մարդիկ են։ Օրան հանդիսաւորութիւնն էլ մի բան աւելացրած է նրանց դէմքերին վրայ...

Սակայն կայ այստեղ մէկը, որ վատ տրամադրութեան մէջ կերևի. դա ժամարար Մէլիք Տէրտէրն է, որ չնայած օրան հանդիսաւորութեանը և իր առատ հունձին՝ վերին աստիճանի տխուր է և մտածկոտ։

Ո՞ւր է այն Մէլիք Տէրտէրը, որ ուրիշ տեղն իր՝ Աշմուշատցուն յատուկ հրաշալի ձայնովը եկեղեցւոյ հնագարեան կամարները կը զդրդացնէր. ո՞ւր է նրա միշտ ժպտուն, միշտ կրակոտ նայուածքը, որով նա կը դառնար իր ժողովրդին... Այսօր փոխուել էր նա...

Ահա նա — Մէլիք Տէրտէրը, որ ժամերգութիւնը վերջանալէ յետոյ դարձաւ դէպի ժողովուրդը։ Նա իր քարոզով կը պատմէ ձեզ իր վատ տրամադրութեան պատճառը։

«Շնորհք և խաղաղութիւն Աստուծոյ Ամենակալին ինքէ ի վերայ ժողովրդեանս այսորիկ. ամէն։

Այդպէս սկսեց նա իր քարոզը և ապա

շարունակեց. «Ժամանակով, երբ Տէրն մեր կուզէր յանդիմանել ամբարիշտ Եգիպտացի-ներին՝ կը զրկէր նրանց վրայ իր բարկու-թեան շանթերը. — երբեմն կարկուտ, երբեմն մարախ, երբեմն գորտեր լեցնելով... երբեմն անգրանիկները խլելով... Մինչև որ մարդիկ խմանային Աստուծոյ զօրութեան չափը և ձեռք քաշէին իրենց մեղքերէն...

— Ճան, ճան, տէրտէր — ճան... շշնչացին ունկնդիրներէն մի քանիսը, — Աստուած կարգիլ հաստատ պահէ... Բերանէդ մեղր ու կարագ կը վազէ... Սոդոմն խմաստուէն ետ չես մնար, խելացի զլուխդ գիտութեան ծով է, լեզուդ հիւնարլի, խօսքերդ մարդարիտ, հոգիդ արքայութեան փայ ու բաժին...

— Այո, այդպէս է, սիրելի ժողովուրդ Աստուծոյ, շարունակեց Մելիք Տէրտէրը, — Աստուած երբեմն մարդոց մեղքերէն ետ կեցնելու համար կը պատժէ նրանց. երբեմն էլ նրանց հաւատքը փորձելու համար կը զրկէ հազար ու մի փորձութիւններ... Մարդիկ պէտք է գիտենան, որ իրենց գլխին եկած բոլոր փորձանքները Աստուծմէ են — թէև դրանք գործուէին մարդոց ձեռքով, — որովհետև ինչպէս մեր հներն ասել են՝ «առանց

Աստուծոյ կամքին ծառի մի տերևն անգամ վար չիյնար ծառէն»...

Մենք շատ անգամ կը գանգատինք այս կամ այն մեծաւորին դէմ, թէ ժողովուրդը կը չարչարէ, թէ մեր իրաւունքները ոտքի տակ կառնէ, թէ մեր ունեցածները կը խլէ, մեր լոյս – հաւատքին կը վիպշի են. են... Բայց մենք այնքան յիմար մարդիկ ենք, որ չենք մտածեր, թէ «առանց Աստուծոյ կամքին ծառի մի տերևն անգամ վար չիյնար ծառէն», թէ այդ մեծաւորը կը գործէ այդ ամենը Աստուծոյ գիտութեամբ, որովհետև եթէ Աստուած կամենայ՝ այնպիսի մի սիրտ կու տայ այդ մեծաւորին, որ սա մեր գէշ կարծած բաները չանէր... Եւ եթէ կը գործէ մեծաւորը՝ այդ կը նշանակէ, որ Աստուծոյ թելադրութեամբ կանէ և հետևարար դրա դէմ արտնջալու կամ գանգատելու իրաւունք չունին քրիստոնեայ մարդիկ, որովհետև «առանց Աստուծոյ կամքին ծառի մի տերևն անգամ վար չիյնար ծառէն»...

Ահա այդպէս, սիրելի ժողովուրդ Աստուծոյ, ինչ որ տեղի կունենայ աշխարհի վրայ՝ Աստուծոյ հրամանովն է[1]...

1. «Մարդս ինքը կը ստեղծէ իր ճակատագիրը, — կասէ Կ. Ֆլամմարիոնը, – Նա կը դարձրանայ կամ

կարժէ յիշել և «Աստուածահայր, պա-
բագլուխն մարգարէից, անմահ սաղմոսեր-
դու, մեծ թագաւոր» Դաւիթի խօսքը, թէ՝
«Ցէր աղքատացուցանէ և Ցէր մեծուցանէ,
իջուցանէ ի դժոխս և հանէ զնա»։ Ուրեմն,
սիրելի ժողովուրդ, ինչ որ դայ մեր գլխին՝
մենք պարտաւոր ենք Ցոր երանելիին պէս
ասել. «Աստուած տուաւ և Աստուած առաւ,
Նրա կամքը օրհնեա՛լ լինի»...

Գիտեմ՝ հիմա դուք պիտի ասէք, թէ
ինչ է այսպէս քարոզ խօսելուս պատճառը.
Նրա համար խօսեցայ, որ երեկ երեկոյեան
ինձ մօտ եկաւ Մելիք Մխսաքենց հողին
վրայ բնակւող Սայիտ Պէկի գործակատար
Զիլֆիխար աղան և իր տիրոջ կողմէն յայտ-
նեց, որ այսօր ձեզ քարոզ խօսիմ և յոր-
պորեմ, որ յառաջիկայ երկուշաբթի օրը,
մեռելոցին, առաւօտեան ժամերգութենէ յե-
տոյ ձեզմէն իւրաքանչիւրն շտապէ վեր առ-
նել բահ, բրիչ, թի ևն. ու հաւաքուիք այս
տեղ։ Որովհետև Սայիտ Պէկը կուզէ իր հա-
մար մի արժանավայել բնակարան շինել մեր

կիրնայ՝ նայելով իր գործերին»։ — Բայց Նաճարանի
Ցելամմարիանը, ինչպէս կը տեսնէք, ուրիշ կերպ է հա-
մոզած և մէջքէն երկու կասը կը լենի՝ իր փիլիսո-
փայութիւնը առաջ տանելու համար...

գիտում... Եթէ մենք չ՝լինենք մեր Պէկին ապարանքը՝ ում պիտի շինէ հապա, սիրելի ժողովուրդ...

Գանի որ «առանց Աստուծոյ կամքին ծառին մի տերևն անգամ վար չիյնար ծառէն», հասկանալի կը դառնայ, որ՝ միայն մի քանի տարի առաջ Մելիք Միսաքենց մօտ ծառայողը՝ անպայման Աստուծոյ գիտութեամբ և Նրա հրամանով է հասել հիմակուան բարձրութեան, որովհետև «Տէր աղքատացուցանէ և Տէր մեծուցանէ. զի այդպէս հաճոյ է առաջի Նորա»... Եթէ Սայիտ Պէկը արժանի չ՝լինէր այդ բարձրութեան՝ տարակոյս չիկայ, որ Աստուած Նրան չէր էլ բարձրացրնի... Ուրեմն մենք պարտաւոր ենք Յորին պէս ասել՝ «օրհնեալ լինի Տիրոջ սուրբ կամքը»...

Գիտեմ, սիրելիներս, որ ձեզի շատ ծանր պիտի թւի մեռելոցի պէս աղիզ օրը աշխատելը, բայց երբ Տէրը այդպէս է կամեցել՝ մենք ի՞նչ կարող ենք ասել դրա դէմ... Խօ այդ էլ մեր անձնական շահին համար չենք աշխատիր, որ, ասենք Աստուած մեզ կը համարէ, այլ պիտի աշխատենք մենք մեր գլխի տիրոջ համար, որը Աստուծոյ հրամանով և Պետութեան բարձր կարգա-

գրութեամբ ծառայութեան ստիճանէն, յանկարծ, բարձրացաւ մինչև պէկութիւն...

Ինչ էլ և լինի, մենք պէտք է գիտենանք, որ Սայիտ Պէկը այսօր մեր գիւղի աղան է, մեր մեծաւորը, մեր գլխի թագը և ըստ Աստուծոյ պատուիրանին, թէ «ծառայք հնազանդ լիցին տերանց իւրեանց» մենք պէտք է հնազանդ լինինք Սայիտ Պէկին...

«Առանց Աստուծոյ կամքին ծառին մի տերևն անգամ վար չիյնար ծառէն»։

Լսողք և կատարողք օրհնեալ են և օրհնեալ եղիցին այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն»։

Քարոզը վերջացաւ։

Բայց պէտք էր տեսնել, թէ ինչպէս ուրախ — զարթի արամադրութեան յաջորդեց մահասարսուռ տխրութիւնը... Քարոզի վերջին խօսքերով կարծես սառը ջուր ածեց ամենքի գլխին... Հարուածը սոսկալի էր!

— Գոնէ մի ուրիշ օր լինէր, ճէհէննէմը, բայց ս. Վարդավառի տօնին... Օ՛, այդ արդէն անտանելի է... Բայց... ինչ արած, Աստուած այդպէս է կամեցել, ինչպէս ասաց Մելիք Տէրտէրը, թող օրհնուած լինի Աստուծոյ կամքը, չէ՞ որ «առանց Աս-

աստծոյ կամքին ծառին մի տերևն անգամ վար չիյնար ծառէն», խօ այդ մասին էլ կասկածել չէ կարելի... Մելիք Տէրտէրն ինքը տասն անգամ կրկնեց այդ բանը և... շատ ճշմարիտ է!...

XII.

Ժամերգութիւնը վերջանալուց յետոյ բոլոր ազամարդիկը մնացին եկեղեցւոյ ընդարձակ գաւթում, միայն կին մարդիկ և երեխաները, որոնք համարեա ոչինչ չէին հասկացել Մելիք Տէրտէրի երկար քարոզէն և համոզուած էին, որ այդպէս քարոզ կաթուղիկոսն էլ չի կարող խօսել, փառք տալով Աստուծուն, որ իրենց այդպէս շնորհալի տէրտէր է բաշխել, — ցրուեցան տները։

Եկեղեցւոյ գաւթում մնացող ազամարդիկն էլ, բացի մի խումբ «անասնատուածներէն», նոյն կարծիքին էին, սակայն այնու ամենայնիւ սգաւորի նման գլուխները կախ ձգած՝ կը մտածէին։ Այդտեղ էր և օրուան հերոսը — Մելիք Տէրտէրը, որը թէև կը ցանկար մէկ — երկու խօսք էլ ասել, բայց անողոք

«իրականութիւնը» կապել կաշկանդել էր նրա լեզուն։

Բայց այդ դրութիւնը երկար չ՚տևեց, որովհետև Մելիք Տէրտէրը դարձեալ սկսաւ խօսիլ.

— Սիրելիք, ասաց նա, մենք քրիստոնեաներս արանջալու, զզուհելու, մեր կեանքէն անբաւական լինելու իրաւունք չունինք... Մեծ համբերութեան անմման օրինակը մեզ տուել է Ինքը — Փրկիչը... Պէտք է համբերենք... Համբերութիւնը կեանք է! Ուզած — չուզած՝ պէտք է համբերենք!... Մինչև որ Աստուծոյ համբերութեան չափը լիքնայ... Ա՛ռ այժմ մեզ կը թնայ կատարել Աստուծոյ հրամանը և պատրաստուել ընդունելու Սայիտ Պէկի կարգադրութիւնները...։ Ես հաւատացած եմ, որ վաղ թէ ուշ Աստուած պիտի խղճայ մեր ժողովրդին և պիտի բանայ իր անսպառ ողորմութեան գուռը մեր առջև Աստուած Ի՛նքը պիտի մաքրէ մեր հաշիւը մեր թշնամիներին հետ...։ «Եթէ ոչ շինէ Տէր, ի նանիր վաստակին շինողքն» կասէ սուրբ գիրքը...

Այդ հանառօտ ճառէն յետոյ «սպասորներին» մէջ էլ տիրեց մի փոքր կենդանութիւն և սրանք էլ սկսեցին «լեզու թրջել»...

Սուար մեծամասնութիւնը Մելիք Ցէրաէրի թէ՛ նախկին քարոզը և թէ վերջի ճառը կը գտնէր խիստ քրիստոնէավայել, խիստ նպաստակայարմար։ Միայն Մելիք Մուրատն իւրայիններով, մի խօսքով «անաստուածներն» էին, որ ի զուր կը փորձէին վիճել մեծամասնութեան կարծիքի և համոզման դէմ, առարկելով որ՝ կատարելով Սայիտ Պէկի ապօրէնի հրամանները, առիթ կու տային նրան միանգամ ընդ միշտ տիրելու Նաճարան գիւղին...

Բայց «անխոհեմ — անաստուածների» այդ համարձակութիւնը ոչ մի դրական հետևանք չունեցաւ և «խոհեմ — աստուածապաշտները» վճռեցին հետևել Աստուծոյ պաշտօնեայի — Մելիք Ցէրաէրի խրատներին։ Հարցը վճռուած էր։ Նրանք վերկացան, որ գրին...

XIII.

Դեռ եկեղեցու զաւթէն դուրս չէին եկել նրանք, երբ տեսան, որ երեք ձիաւորներ մօտեցան ժամի դրանը։ Ձիաւորները սաքմ մինչև գլուխ գինուած քրդեր էին և հազուստներէն կերևէր, որ մէկը մի մեծ ցեղապետ էր, իսկ երկուսը՝ նրա թիկնապահները։

Պարթևահասակ ցեղապետը իր ամենի ձին թիկնապահներին յանձնելով՝ ինքը խրոխտ քայլուածքով մտաւ եկեղեցւոյ զաւիթը և սաստեց ժողովրդին, որ չ՝հեռանան այդտեղէն։

Ցեղապետը հաւզել էր շատ շքեղ, որպէս վայել էր հանդուել մի մեծ ցեղի փառահեղ ցեղապետի։ Նրա խոժոռ, կրակ կարած դէմքը ցոյց կու տար, որ բարի պտուղ չէ և բարի մարքերով էլ չէր եկել այդտեղ։

Նա կը խօսէր կրմանճի քրդերէն, խիստ սրոշ, մեկին շեշտերով և նաճարանցոց հասկանալի սճով։

Երբ նա հրամայեց գիւղացոց, որ տեղերը կանգնին՝ բոլոր այդտեղ եղող նաճարանցիք

սարսափահար խմբեցան Մելիք Տէրտէրի շուրջը։

— Ո՞վ է ձեր քահանան, հարցուց ցեղապետը խրոխտագին։

— Ձեր ծառան եմ, տէր, և ձեր հրամանների սարուկը, — պատասխանեց Մելիք Տէրտէրը՝ շփոթած և ցեղապետին առջև խոնարհ, խոնարհ գլուխ ծռելով։

— Լաւ! Ինչո՞ւ ես հաւաքել այստեղ սրանց։

— Ծառաներդ նոր դուրս եկան ժամէն և տուն կերթային։

Բոպէական լռութենէ յետոյ ցեղապետը դարձաւ թիկնապահներէն մէկին և ասաց.

— Ասլա՛ն, ներս արի։

Թիկնապահը իր ձին կապեց ծառէն և ինքը կայծակի արագութեամբ ներս սլանալով՝ կանգնեց տիրոջը դէմ։

— Կապէ՛ այդ շանը ձեռքերը կռնակին յետև, — հրամայեց ցեղապետը թիկնապահին՝ ցոյց տալով Մելիք Տէրտէրը։

Հրամանը կատարուեց խսկոյն և եթ։

Ժողովրդի մի մասը լեզապատառ եղած՝ մնաց երեսի վրայ, մնացեալներն էլ երեսները դարձրին մի կողմ, որպէս զի չ'տեսնեն իրենց հովի արտասուելի վիճակը...

Միայն «անասունածներն» էին, որ խոբին հեռաքրքրութեամբ և ուշադրութեամբ կը դիտէին ցեղապետի շարժումները և անհամբեր կսպասէին, թէ ինչ է լինելու այդ հանելուկի վերջը...

Ինչ կը վերաբերի Մելիք Տէրտէրին, խե՜ղճ մարդ, լեղուն պապանձուել էր, որ աղաչէ, պաղատի, իր յանցանքն հարցնէ... Այժ էլ չունէր, որ — ի՞նչ կը կարծէք — էյնար «զօրեղի» ոտքերը և դառնադի արտասուքով զթութիւն հայցէր...

— Լսիր, Հայ, գոչեց ցեղապետը նրա երեսն ի վեր, — եթէ ճշդրիտ պատասխանես իմ հարցերին՝ պիտի արձակիս և գնաս գործդ, իսկ եթէ փորձես խաբել ինձ, այն ատեն վա՛յ քու արեւին... Այս կը վարձատրէ քեզ...

Ասաց և ցոյց տուաւ իր մերկացրած դաշոյնը, որի վրայ դեռ թարմ արիւնի հետքեր կը նշմարուէին...

Մելիք Տէրտէրը զլխով հասկացրեց, որ եթէ չ'սպանէր իրեն՝ պիտի ստանար տալիք հարցերի ճիշտ պատասխանները։

Ցեղապետը հանդարտեցուց նրան և ասաց.

— Ապա ասա՛ ինձ՝ այսօր ինչի՞ մասին

քարոզ խօսեցար եկեղեցում... Բայց կարծ, երկու խօսքով վերջացուր։

Տէրտէրը կակազելով պատմեց իր քարոզի միտքը։

— Ա՛յ քեզ սատանի փայ... զուշեց ցեղապետը կրճատցնելով ատամները, երբ լսեց Տէրտէրի խօսքերը... — Դու փոխանակ քեզ յանձնուած ժողովրդին խրախուսելու և արատաքին ու ներքին սանձգութիւնների դէմ պաշտպանելու միջոցներ ցոյց տալու՝ քու ոչխարային հասկացողութեամբդ դեռ կ'առաջնորդես նրան դէպի սարկութիւն, դէպի անխուսափելի բնաջնջումն... Բաւական չէ, կասեմ, որ դու քո վաշխառութիւնով տգրուկի նման կը ծծես խեղճ արիւնակիցներիդ արիւնը՝ դեռ կոտիպես էլ նրան — քո յիմար, սարկացնող քարոզներով, — որ իր երեկոյ ծառային համար այսօր իր ձեռքով պալատ շինէ և նրան, իր ծառային, իր գլխի տէրը շինէ... Բաւական չէ, որ դու և քո նմանները դարերէ հետէ թուլացրել էք մի քաջարի ժողովրդի — որպիսին էր մի ժամանակ Հայ ցեղը — թեն ու թիկունքը և զանազան կրօնական պիրկ շղթաներով կաշկանդել նրա միտքն ու հոգին՝ դեռ ներկայ ինքնաճանաչութեան դարումն էլ կը շարունակէք թու-

նաւարել խեղճ ժողովրդի կեանքը, թանձ-
բացնել նրա էութիւնը վարագուրող խա-
ւարը...

— Հապա զո՞ւք, գլխակոր խոյերի երա-
մակներ, — գարձաւ նա սարսափահար ամ-
բոխին... — Դուք, ցածահոգի սողանո՛ւ, որ
սովոր էք լղել ձեզ կոխկռտող գարշապարը
և համբուրել ձեզ ապտակող ձեռքերը...
Դեռ երկա՞ր, ասէ՛ք, պիտի հաւատաք ձեր
ճակատագիրը այս և սրա նման խոզերին,
որոնք ընդունակ են կոխոտել ամեն մի սրբ-
բութիւն...: Բայց երկար այսպէս շարու-
նակուել չէ կարող, որովհետև ձեր ցեղը
ընաջնջման ահռելի վտանգին առջև է կե-
ցած այժմ... Միայն տապանաքարերի վրայ
երևցող ոգորմելի բառերը պիտի յիշեցնեն
մարդոց, որ մի ժամանակ այս կողմերում
գոյութիւն է ունեցել Հայ ցեղը... Իսկ այդ
մի անհերևակայելի խոր խոց կը լինի մեր
երկրի զաւակների կրծքին վրայ...: Կը
կրկնեմ, որ այդ դրութիւնը երկար շարու-
նակուելու չէ...

Նա ձեռքը տարաւ կողքէն կախած կարճ
սուրը և շարունակեց իր խօսքը որոտընդոստ
ձայնով.

— Կը երդւիմ այս անպարտելի սրով,

որը մի ժամանակ Բագրատունի մի Հայ թագաւորի սիրելին է եղել, կը երդւիմ և իմ Պապերի նուիրական գերեզմանով, որ այսուհետև իմ գործը պիտի լինի՝ անյապաղէն լափել ձեզ նման սրտուկների արիւնը, եթէ դուք չ'մտածէք ձեր սեփական շահերի վրայ և ձեռք չառնէք ինքնապաշտպանութեան միակ փրկարար ճանապարհը...

Փոքր լռութենէ յետոյ շարունակեց նա.

— Էս սրտի ցաւով կը յիշեմ այն օրը, երբ երկու ազնիւ հայերի հետ կերթայինք Ղամիշլուք գիւղը[1] և կը յորդորէինք գամիշլուքցիներին, որ ի նպաստ ունենան իրենց անտանելի վիճակը և փրկարար միջոցների ձեռնարկեն։ Այդտեղ մարդիկ, ձեզ նման, այնքա՜ն էին սարկացել, որ մեր յորդորները մնացին «ձայն բարբառոյ յանապատի»... Ղամիշլուքցիք լսեցին Մելիք Խաչոյին, որը մեր խօսքերին ոչ մի նշանակութիւն չէր տար, լսեցին նրան և... կորսուեցան։ Հէնց այդ Մելիք Խաչոյի թոռան — Թուրխանասայի այլասերած որդին է այն Սայիտ Պէկը, որ ձեզ մօտ ծառայութեան ասպիճանէն բարձրացաւ մինչև պէկութիւն և այսօր վճռել է՝

1. Տես «Քիւրա Պէկ», Ա. Հատորիկ։

ձեր սեփական ձեռքով շինել այն սպան-
դանոցը, ուր պիտի մորթուիք դուք անո-
զորմաբար...

— Դուք պէտք է գիտենաք, աւելացրեց
նա, — որ ձեր դէմ կեցած է այս բոպէիս
ձեր ցեղին համար իր կեանքն իսկ չ'խնայող
մի մարդ, որը սրտի մորմոքումով միայն
կարողացաւ այսքան խօսել ձեզ հետ և որը
բոլորովին ուրիշ կերպ պիտի վարուի դէպի
ձեզ, եթէ դուք, դէթ այսուհետև, զդաք ձեր
սխալը ու չ'խաղաք ձեր բաղդին հետ...

Վերջին խօսքերէն յետոյ փարատուեցաւ
նաճարանցոց զլխէն տխրութեան և յուսա-
հատութեան մառախուղը և տեղի տուեց մաս-
նաւոր ուրախութեան։ Դէպի անկոչ հիւրը
շատ դէշ տրամադրուած նաճարանցիք տեսան,
որ իրենց հրէշ կարծած ցեղապետը հայի
սրտացաւ բարեկամ մի մարդ է, որ հէնց
այդ ազգի բարիին համար կառնէր ներկայ
քայլը և որ հետևաբար տեղիք չ'կայ նրա-
մէն վախենալու, որովհետև «եթէ նա բարե-
կամ է, այնքան էլ մեծ մարդ չէ»... Կարժէ
յարգել և պատկառել այդ մարդէն, որի կա-
պիտ ուժին դէմ անզօր ես դու, կը մատ-
ծէին նրանք։ Եւ այդ հասկանալի է...

XIV.

Յեղապետը դեռ նոր էր վերջացրել իր խօսքը, երբ մի ուրիշ քիւրտ ձիէն ցած եկաւ ժամի դրանը, ձին յանձնեց մի գիւղացու և ինքը ներս մտաւ։

Նորեկը մի գաղտագողի նայուածքով զննեց Մելիք Տէրտէրին ու նամարանցիներին և այնուհետև մօտեցաւ ցեղապետին, խորը գլուխ տալով ողջունեց նրան և գրպանէն մի նամակ հանելով՝ յանձնեց ցեղապետին։ Վերջինս մի բոպէ այլայլելով առաւ մեր նամակ կոչած թղթի կտորը և բացաւ՝ արաբերէն տառերով գրած էր այդ թղթի վրայ հետևեալ երեք տողը.

« Սիրելի Թափառական,
Շտապիր, եկ Հաւաս...
Քոյ՝ Տէլի-Քէշիշ ».

Նա ծալեց թուղթը, դրաւ գրպանը և դարձաւ նամարանցիներին.

— Հիմա ձեր անելիքը շատ պարզ է, —

չ'պէտք է կատարէք Սայիտ Պէկի ապօրինի հրամանները։

— Եթէ չ'կատարենք, պէկը կը բարկանայ և մեզ սրէ կանցնէ տնով – տեղով, շշնչաց Մելիք Տէրտէրը։

— Այս երիտասարդը ձեզ կը սորվեցնէ՝ ինչպէս անելու է՝ պէկի և նրա արբանեակների վրէժխնդրութենէն ազատ մնալու համար։ Ասաց ցեղապետը՝ ցոյց տալով նամակաբերի վրայ և հրամայեց արձակել Տէրտէրին։

Երբ վերջին հրամանը կատարուեց՝ նա դարձաւ Մելիք Տէրտէրին և ասաց.

— Այժմ դնա բեր եկեղեցւոյ խաչն ու աւետարանը։

Երկու րոպէ յետոյ Մելիք Տէրտէրը՝ խաչն ու աւետարանը ձեռքին՝ ներկայացաւ ցեղապետին։

— Այժմ ծնրադրիր և երդուեցրու քոյ ժողովրդին այնպէս, ինչպէս որ կը թելադրեմ ես։ Ասաց ցեղապետը և դառնալով պէկի ժողովուրդն՝ աւելացրեց.

— Ծնրադրեցէք և դուք, սիրելի բարեկամներս, և ամենքդ միասին կրկնեցէք ձեր քահանայի խօսքերը, դա կը լինի զրաւականը և հիմքը ձեր ապագայ զեղեցիկ կեանքի...

Նրա հրամանները կատարեցան նոյնութեամբ։

— Կը երդւինք քրիստոնէական վեհ նշանով և մարդկային ազատութեան Մեծ Քարոզչի ազիզ Աւետարանով, որ այսուհետև սրբութեամբ և անձնուիրութեամբ պիտի պաշտպանենք մեր մարդկային և ցեղային իրաւունքները՝ բոլոր կարելի եղած միջոցներով՝ արտաքին ոտնձգութեանց դէմ... թող Աստուած և վատերին պատուհասողները պատժեն մեզ, եթէ երբէք դրժենք մեր ներկայ սուրբ ուխտը!

Ամեն ինչ վերջացաւ։ Յեղափոխն, ուրախութեան արտասուքն աչքերին, գրկախառնուեց Մելիք Տէրտէրին, ապա և միւս ներին հետ, համբուրեց նրանց ճակատը և խրախուսելէն յետոյ ձի նստաւ ու մեկնեց Նաճարանէն...

XV.

Դեռ Վարդավառի կիրակին չի լուսացած՝ մի քիւրտ տղամարդ զուրս գնաց Մելիք Տէրտէրի տունէն։ Զիւլֆիխարն էր այդ, որ Մելիք Տէրտէրի գրած մի ընդարձակ նամակը կը տանէր Սայիտ Պէկին։ Նամակը կը կրէր այդ օրուայ թուականը։

Ես այդ նամակի մի քանի տողերը կը ներկայացնեմ իմ ընթերցողին, որպէս զի ընթերցողը լաւ ճանաչէ մեր «հոգևոր հովիւին»։ Ահա.

«Քաջազուններու զարմէն սերած վսեմաշուք Սայիտ Պէկին.

«Համաձայն ձերդ մեծութեան բարձր հրամանի ես, Մելիք Տէրտէրս, այսօր երեկոյեան տեղիս եկեղեցում խօսեցի մի երկար քարոզ և յորդորեցի նաճարանցիներին, որ երկուշաբաթի պատրաստ լինին ձերդ մեծութեան ծառայութեանը...

Քարոզս ժողովրդին վրայ թողեց շատ լաւ տպաւորութիւն... Ես սրտանց աշխատեցայ ամեն կերպ դիւրացնել գործը և ա-

պատայ քայլի ապաւորութիւնը քաղցրացնել։ Էս հասայ իմ նպատակին... Սակայն, չնայած այդ բոլոր նախապատրաստական բարեյաջող պայմաններին, անսպասելի կերպով լոյս աշխարհ ինկաւ ինչ որ կասկածելի քիւրտ ցեղապետ, որը, ցաւօք սրտի պիտի խոստովանիմ, ի դերև հանեց բոլոր աշխատանքներս...

Էս և ինձ հետ բոլոր նաճարանցիք՝ յիշեալ ցեղապետի սրի անմիջական ազդեցութեան տակ, բանի, հակառակ մեր կամքի և ցանկութեան... երդուեցինք խաչով և աւետարանով, որպէս զի չկատարենք ձերդ մեծութեան հրամանները...

Սակայն այդ երդումը ոչ մի նշանակութիւն չունի, քանի որ բռնութեամբ է կատարուած այն։ Էս համոզուած եմ, որ դեռ ամեն ինչ կորած չէ, որովհետև Հայերը հազար ցեղապետի ու թագաւորի խօսքին կարևորութիւն չեն տար, եթէ քահանան սրբատանց աշխատի հակառակիլ դրանց...

Ձերդ մեծութիւնը կարող է վստահիլ իմ խօսքերին ու իմ հաւատարմութեանը, որովհետև հէնց իմ անձնական շահերս կը պահանջեն՝ նպաստել ձերդ մեծութեան զօրեղանալուն այս կողմերում...

Թէ ինչու. — ես լինելով այս գիւղում քահանայ, միաժամանակ և վարժապետ ու սրան — նրան տոկոսով դրամ տուող մարդ՝ կունենամ, ինչպէս որ ունիմ, բազմաթիւ ապառիկներ, պահանջներ, որոնց փոցնելու համար ես կը կարօտիմ մի զօրեղ մարդու աջակցութեան... Եւ ով կարող է լինել այդ «զօրեղ մարդը», եթէ ոչ ձերդ մեծութիւնը, որ դեռ պէկութեան տիտղոսը չ'ստացած՝ կը բարեհաճէիք բարի յարաբերութիւն պահպանել մեր մէջ և քանի անգամներ ձերդ մեծութիւնը պարզապէս հասկացրել է ինձ, որ «մեր — երկուսիս — միմեանց հասկանալէն է կախուած մեր փառահեղ ապագան... Ուրեմն ես, թէ՛ որպէս հաւատարիմ ծառայ ձերդ մեծութեան և թէ՛ որպէս իմ գործս հասկացող մարդ՝ պէտք է շարունակեմ անձնուիրութեամբ ծառայել ձերդ մեծութեան, որ կանգնած էք մեծ բազդի շէմքումը և այսօր — վաղը կը թեակոխէք «նոր կեանքի» մէջ... Միայն թէ այդ քաւթառ Մելիք Միսաքի քիթը գետինը քաւէր, այդ է իմ ցանկութիւնը, մէկ էլ այն անասունած Մելիք Մուրատը վերանար մէջտեղէն։ Սա մեծապէս կը խանգարէ մեր գործերի յաջող ընթացքը և միշտ էլ զգոյշ է ու բաւական էլ վարպետ...

Ի վերջոյ Մելիք Տէրաէրն իր այդ տեղեկագիր – նամակով կը ծանօթացնէր Սայիտ Պէկին Նաճարանում իրեն սպասող ընդունելութեան հետ։ Բայց ի այդ նա կը յայտնէր, որ «քիւրտ ցեղապետի երեք ընկերները մնացին Նաճարանում, որոնք իրենց վիմագծերով ու շարժումներով բաւական կասկածելի կը թուին ինձ... Հապէ՛ թէ դրանք քիւրտեր լինին»։ Թէև միւս կողմէն յատկապէս կը խնդրէր, որ Պէկն զգոյշ վարուի դրանց հետ, որովհետև եթէ դրանք նոյն իսկ անկասկած հայեր էլ լինէին՝ չ'պէտք էր նրանց աշմուշացիների հետ համեմատել...

«Ո՞վ գիտէ, կը դրէր նա, գուցէ Զէյթունցիներ են դրանք, որ այդպէս լաւ զինուած են և աչքերէն արիւն կը վազէ... Զգո՛յշ...

Նա կը խոստանար մինչև երեկոյ էլի նիւթեր հաւաքել և ուշագրաւ նորութիւններն հաղորդել պէկին նոյնութեամբ...

Կարդալով իր «բարեկամի» նամակը՝ պէկը շատ ուրախացաւ և մրթմրթաց քթի տակին. «Երբ շան ճէլէ կու գայ – նա կերթայ չոպանի հացը կուտէ»...

Բայց Զիւլֆիխարը, որ մօտիկէն ծանօթ էր խնդրի բոլոր մանրամասնութիւններին

և որին միայն կը յայտնէր Սայիտ Պէկն իր գաղտնիքները, զգուշացրեց պէկին հարեանցիօրէն, որ շատ էլ լաւատես լինելու չէր։ Պէկի հարցին թէ ինչո՞ւ։

— Թէև Աշմուշատում առ հասարակ — պատասխանեց նա — և Դամարանում մասնաւորապէս քո կամքէն է կախուած ամէն բան, բայց (զուցէ քեզ բոլորովին անտեղի թւի իմ կասկածամտութիւնը) ես հիմք ունիմ մտածելու, որ մի զուցէ Մելիք Տէրտէրի շեշտած «կասկածելի ցեղապետը» Փափազ — Օղլիների առհմին անհաշտ թշնամի Տէրսիմցոց կամ Խրսանցոց ցեղապետը լինի, որ — ով գիտէ — զուցէ դեռ չէ մոռացել հին հաշիւները և կուզէ խանգարել Աղի Պէկի արժանաւոր ժառանգի հաղիւ հազ ապահովուած անդորրութիւնն ու բաղդը...

Որքան էլ որ Զիւլֆիխարի այդ կանխակալ կարծիքները Սայիտ Պէկին համար անհաճոյ լինէին, այնու ամենայնիւ նրա վերջին խօսքերը կը պարունակէին իրենց մէջ խելքի մօտիկ մտքեր, որոնց վրայ երկար — երկար մտածել ու զգոյշ շարժուել պէտք էր...

XVI.

Կիւրակի գիշեր Մելիք Տէրտէրի տանը հաւաքուած էր Նամարանի «ագ – սագաղի» (աշխոր = Գեղի Մեծաւոր) դասակարգը։ Տարակոյս չկայ, որ այդ գիշեր սովորական կերախումէն աւելի բարձր տեղ կը գրաւէր «սպարանքի խնդիրը», որի հետ կապուած էր ինչ որ չարագուշակ նորութիւն... Եւ կարծէր, որ առանձին խորհրդակցութեան առարկայ դառնար այդ խնդիրը։

Այդ պատճառով էլ, երբ ընթրիքի սեղանը, տեղական սովորութեան հակառակ վեր քաշեցին, Մելիք Տէրտէրը դարձաւ իր հիւրերին և ասաց.

— Երեկ երեկոյեան մենք եկեղեցւոյ գաւթում ս. Խաչի և աւետարանի վրայ երդուեցինք, բայց ինչի՞ համար, կարող եմ ասել, որ մեզմէն ոչ ոք չիմացաւ այդ։

— Ինչպէ՞ս թէ ոչ ոք չիմացաւ, — ընդ միջոց Մելիք Մուրատը, — զոնէ ես շատ լաւ հասկացայ։

— Ինչի՞ համար էր այդ երդումը, հար-

ցուց Մելիք Տէրտէրը՝ յայտնի զժգոհելով Մելիք Մուրատի այդ ընդդիմախօսութեան վրայ, — եթէ հասկացել ես՝ ապա ասա, տեսնեմ, ինչու երգուեցար դու, ի՞նչ անելու համար...

— Ես և դուք — ամենքս միասին — երդուեցինք, որ չ'կատարենք Սայիտ Պէկի ապօրինի հրամանները...

— Բայց երդումի ժամանակ Սայիտ Պէկի անուն չ'կար երբէք։

— «Արտաքին ոտնձգութիւններ» բառերը բաւական են...

— Այդպիսի պատճառաբանութիւններով դու չես կարող մոլորեցնել մեզ, Մելիք Մուրատ... Դու պէտք է գիտենաս, որ երդումի հետ խաղալ չի լինիր... Մենք իրաւունք չունինք երդումի այս կամ այն բառի միտքն ազատագրել և մեր կամքին համեմատ բացատրել, — այդ մեծ մեղք է, որովհետև Աստուածաշունչը կասէ թէ՝ «ով որ մէկ բառ աւելցնէ կամ պակսեցնէ՝ նա կը մատնուի զժոխքի անշէջ կրակին... Անդ եղիցի լալ և կրճտել ատամանց»... Ուրեմն...

Մելիք Տէրտէրն Աստուածաշունչէն կը խօսէր, որի դէմ առարկելն աններելի յանցանք կը լինէր... «Երբ եկեղեցւոյ պաշտօ-

նման վկայութիւն կը բերէ ս. Գրքէն՝ կը նշանակէ որ նրա բերանով Աստուած կը խօսի»...

Ուրեմն — նախնեաց երեկոյին Նաճարան-ցիք իրենց երդումով չէին ուխտել՝ չ'կատարել Սայիտ Պէկի ապօրէնի հրամանները!

— Սակայն այդ չի նշանակէր, — ասելացրեց Մելիք Տէրտէրը, — թէ մենք անսրբոյ բառերով մի երդումն ուտելով՝ պէտք է թողնենք, որ մարդիկ կոխկռտեն մեզ, ամենեին ոչ! Մենք պէտք է ազօթենք ամենակարող Աստուծին, որ փրկէ մեզ ամեն տեսակ փորձանքներէ... Մենք պէտք է Քրիստոսի նման գոչենք. «Հայր, անցուր մեզմէն այս բաժակը, բայց եթէ դու կը կամենաս, որ մենք խմենք այդ բաժակը, ապա թող սուրբ լինի Քո կամքը»... Մեծ է Աստուած, սիրելի ժողովուրդ, Նա որ ստեղծել է մեզ՝ Նա կը պահպանէ էլ անշուշտ, միայն թէ՝ մենք ուղիղ սրտով դիմենք Նրան...

Ալեորները բերանաբաց կը լսէին Մելիք Տէրտէրին և նրանցմէ իւրաքանչիւրը կզգար, թէ որքա՜ն զեղեցիկ ու ճշմարիտ խօսքեր էին դրանք... Այո, ամենքը համոզուած էին, որ Մելիք Տէրտէրին պէս «գիտուն, խելացի, իր ժողովրդի շահը մտածող, աստուածա-

վախ... քահանայ ամբողջ աշխարհում կամ մէկ էլ կայ, կամ ոչ...

Միայն Մելիք Մուրատն էր, որ ուրիշ կերպ կը մտածէր...

Բայց ո՞վ է նրան լսողը, աշխարհքը գիտէ, որ Մելիք Մուրատն «անաստուած» է, թող որքան կուզէ «խաղցնէ իր պոչը», — Նաճարանցիք գիտեն իրենց հաշիւը, նրանք մի բսպէով էլ չեն հեռանայ իրենց անմտան հովէն...

— Իմ կարծիքով դու բոլորովին սխալ ես հասկացել այդ բառերը, տէրտէր, — նկատեց Մելիք Մուրատը, — որովհետև ինչ բան է մի խօսք աւելցնող — պակսեցնողը դժոխքի փայ կը լինի՝ ս. Գրքի խօսքերէն, թէ Նաճարանցոց երդումէն... Որքան ես գիտեմ՝ Քրիստոս մեզմէն հազար ութ հարիւր այսքան տարի առաջ է մեռել, ուրեմն նա ինչպէս կարող էր երեկուան օրը դալ Նաճարան, լինել մեր եկեղեցւոյ բակում, լսել մեր տուած երդումը և, ապա, այդ երդումի մասին թելադրել աւետարանիչներին, որ խոտու և դժոխքի սպառնալիքով արգելեն մեր երդումի բառերէն աւելցնել — պակսեցնելը... Տէրտէր, մենք որ քեզ պէս խորունկ կարդացած չենք և սովոր ենք տէր-

տէրների ասածներին հաւանութիւն տալ, — դու էլ մի բոլորովին էշի տեղ դներ մեզ, մի մեզ «ներս բռներ», մի «զալզ պէշլիկը հէլվաճիին հութատրմիշ ըներ», ինչպէս կասեն Կ. Պոլսեցիք... Դու հէնց կը կարծես՝ ես չե՞մ հասկանար ձեր այդ վարպետորդիութիւնները... Օ՛, չէ՛, այդքան էլ անխելք չեմ ես...

— Հիմա ի՞նչ կուզես, դու այն ասա, Մելիք Մուրատ... ընդմիջեց Տէրտէրը սաստիկ բարկացած, տեսնելով որ «անասուածը» կամաց — կամաց կը բարձրացնէ «խորհրդաւոր վարագոյրը»...

— Ի՞նչ ասել կուզեմ, կրկնեց Մելիք Մուրատը, — ահա թէ ինչ. — մի խաբէք մեզ, մի խեղաթիւրէք զրքերի ասածները... մի գարձնէք մեզ ձեր անկուշտ դրպանի գերին... Հերիք է, շատ է նոյն իսկ, որքան խաբեցիք մեզ և թուլացրիք մեր թեն ու թիկունքը... Մեղքացէ՛ք խեղճ ժողովրդին վրայ... Մտածեցէ՛ք մի բոպէ՝ ինչ էր այդ ժողովուրդը — նախ քան իւր օձիքը ձեր ձեռքն յանձնելը, և ինչ եղաւ — յանձնելէն յետոյ... Ցնաքանդներ, ասիածին կատաղիներ... Ա՛մ գլխին մի փորձանք կը պատահի, ո՛վ ինչ գաղանութեան զոհ կը

գնայ, ոչ իր անխելքութեան շնորհիւ ան-
յաջողութեան կը հանդիպի... — այդ ամենի
մէջ չեղաք Երկնքի մասը կը փնտռէք և կը
աքնիք համոզել միամիտ ժողովրդին, թէ
աշխարհիս վրայ գործուող ամեն մի անար-
դարութիւն Աստուծոյ կարգադրութեամբ կը
լինի...

— Ինչ յիմար – յիմար գուրս կու տաս,
տո՛, անասնատուած, խելքէդ ու մաքէդ վեր,
գոչեց Մելիք Տէրտէրը՝ ատամները կրճտաց-
նելով Մելիք Մուրատին վրայ, – էլի՞ ձեռք
առիր քու անհատնում ցնդրանութիւն-
ները, որոնցով դու կը փնասես ինքնիրենդ,
ինչպէս որ խլուրդը հողը փորելով իր գլխին
կածէ... Մտածիր է մի անգամ՝ այստեղ
այսքան մարդիկ կան նստած, հիչ մէկը
ձայն, ծպտուն կը հանէ՞, այդպէս յիմար
բաներ գուրս կու տա՞յ...

— Այդ իրաւ է, տէրտէր, որ այստեղ
շատ մարդիկ կան, բայց նրանց սաքին ու
ձեռքին հետ լեզուներին վրայ էլ այնպիսի
փականք էք դարկել, որ խեղճերը լեզու
թրջել չեն կարող, որովհետև կը վախենան,
որ չլինի՞ թէ, ամա՛ն կիտի, այս կամ
այն խօսքով ձեր սիրտը ցաւեցնեն ու ձեր
սոսկալի անէծքին ենթարկուին... Բայց ես

վաղուց արդէն հասկացել եմ ձեր անէծքների արժէքը և ձեռք իմ քաշել ձեզմէն... Այո՛, սկսած այն օրէն, երբ ես Հին և Նոր աշխարհները սաք կոխեցի, — այն օրէն ես համոզուեցայ, որ «հոգևորականութիւն, կրօնք» ասելով պէտք է հասկանալ այն դասակարգը, որ մի աւելորդ բեռ չինելէ զատ մեր գլխին՝ դեռ մարդոց կառաջնորդեն զէպի իրական դժոխք... Այո՛, դուք սեպուհներդ, որ իբր թէ մարդոց զէպի Բարին առաջնորդելու սրբազան պաշտօն էք ստանձնել, բայց իսկապէս դուք ինքերդ էք, որ գիտակցաբար և անգիտակցաբար մեզ կը մոլորեցնէք և կեանքի ճշմարիտ շաւղէն դուրս կը հանէք... Երեկուան ցեղապետին տեսա՞ր, այ — Մարդ է նա, որ եթէ չամաչէի՝ կը համբուրէի այն օրհնեալ բերանը, ուրիշ այնպէս սուրբ խօսքեր դուրս կու գայէն... Հաւատա որ, Մելիք Տէրտէր, իմ կարծիքով այդպիսի մի քիւրտ ցեղապետ հազարապատիկ աւելի լաւ, աւելի ձեռնտու առաջնորդ կարող է լինել մեզ, քան — ուղիղն ասած — ձեզ նման մէկ միլիոն սեպուհներ... Իմ «գլուխը ծակել է», տէրտէր, և այդ պատճառով գիտեմ, որ հայ ժողովրդի ամենամեծ դժբաղդութիւնը կը կայանայ նրա-

նում, որ նա իր ձակատագիրը հաստատուն և յանձնել է յետադէմ սեագրոխներիդ...։ Գիտեմ և այն, որ իմ գլխի ծակ լինելն է պատճառը, որ ես զառել եմ ձեր աչքին մի տեսակ թունաւոր փուշ, որ — ի մեծ զժբաղդութիւն ձեզ — խրել եմ ձեր ապա-կանուած մարմնին մէջ...

Լոեց Մելիք Մուրատը։ Ալլ ես անկա-բելի էր շարունակել, որովհետև ամբողջ ժո-ղովականները — եթէ կարելի էր այդպէս ան-ուանել Մելիք Տէրտէրի տանն հաւաքուած ալևորներին — սաստիկ զբաղուած վիր ելան տեղերէն ու երեսները խաչակնքելով, սա-տանային հայհոյ տալով, աղօթքներ մրմնջե-լով... սատանեցին Մելիք Մուրատին որ վերջ դնէ իր անհանդուրժելի, մեղսալից խօսքերնին...։ Մելիք Մուրատի դրութիւնը քրիստիքական էր, նա կը տեսնէր ամբոխի մրրկելը, որմէն կարող էր փոթորիկը պայ-թել, իսկ այդ, գոնէ առ այժմ, ցանկալի չէր այնքան էլ... Թէև միւս կողմէն նա կուզէր դուրս թափել իր սրտի վրայ հա-ւաքուած մաղձը, որ երկար տարիներէ հետէ հանգստութիւն չէր տար նրան... Բայց եթէ գիտենայիք՝ որքան կը ցանկար նա, որ այդ վիճաբանութիւնների ժամանակ, որ տեղից

որ է, յայտնէր այդտեղ երեկուն «ցեղապետը» — Պ. Թափառականը — իր արնակալած, սպառնալից աչքերովը և մանաւանդ սարսուկ նաճարանցիներին խօսք հասկացնող միակ սրբազան գործիքովը — պողպատովը... Այն ատեն զուցէ նաճարանցիք հասկանային Մելիք Մուրատի խօսքերը... Բայց քանի որ չ'կար զօրեղ ցեղապետը՝ նաճարանցիք պիտի անսային, պիտի հետևէին Մելիք Տէրտէրին, որը երկար — բարակ ճառոմարանութիւններէ յետոյ եկաւ զարձեալ այն եզրակացութեան, թէ «առանց Աստուծոյ կամքին ծառի մի տերեւն անդամ վար չիյնար ծառէն» և որ, հետևաբար, եթէ Սայիտ Պէկն արժանի չ'լինէր իր ցանկացած ապարանքին, — Աստուած թոյլ չէր տայ, որ նա այդպիսի մի կարգադրութիւն անէր...

«Գեղի մեծաւորները» հաւանութիւն տուին Մելիք Տէրտէրի քարոզած մաքերին և անդառնալի որոշում կայացրին մէջերը, որ «վազը» լինելու են վերին ատաիճանի «խահեմ»...

Հարցը վճռւած — վերջացած էր, որի դէմ ի զուր կը փորձէր Մելիք Մուրատը վիճաբանել և յիշեցնել «երեկը»...

Այո, զուր ջան՝ անօգուտ վատնակ!

XVII.

Վարդավառի մեհեանն է։

Երկուշաբթի առաւօտեան, վաղ լուսա-բացին, ս. Մինաս եկեղեցւոյ՝ թանձրա-փայտէ շինած կարծր կոշնակը անսովոր սաստկութեամբ կը թիկթիկար փայտէ ծանր մուրճերի ուժգին հարուածներին տակ և նա-ճարանցի բարեպաշտ հայ – բարեպաշտներին ժամ կը հրաւիրէր։

Երկսեռ բազմութիւնը – ծեր ու պառաւ, երիտասարդ և աղջիկ, մեծ ու փոքր, – ամենքը – ամենքը շտապով կը գիմէին եկե-ղեցին՝ իրենց սրտաբուղխ, մաքրանուէր ա-ղօթքները վերառաքելու Հայոց Աստուծուն, որ «տայ աշխարհին խաղաղութիւն, եկե-ղեցեաց հաստատութիւն, ննջեցելոց ար-քայութիւն»։

Ժամերգութիւնն արդէն սկսած էր։ Եկե-ղեցում ոչ մի օր աղօթողների այնպէս մեծ բազմութիւն չէր եղել, ինչպէս այսօր։ Առանց պատճառի չէր այդ, այսօր մարդիկ աւելի մեծ կարիք կզգային աղօթելու, քան երբ

և իցէ, որովհետև «այսօր ճեռ օր է... կարծես արիւնի հոտ կու գայ»...

Եւ կաղօթէին բարի ու խոհեմ՝ մարդիկ ծայրայեղ ջերմեռանդութեամբ՝ անհերկայ լինելով, որ այդ միջոցը միայն պիտի փարատէր իրենց գլխէն սպասող փոթորիկը։

Բացառութիւն կը կազմէին միայն «քիւրտ հիւրերը», Մելիք Մուրատը, Գաբրիէլը, Աբրամը, Մելիք Տէրտէրի որդին – Թաթուլը և Հրաչեան, որին Մելիք Մուրատը ստիպեց, որ «մնայ 1–2 օր էլ, գուցէ իրենց պէտք կու գայ»։

Այդ ութը հոգին եկեղեցւոյ դրսի դրանը առջև, մամռոտած տապանաքարերին վրայ նստոտած՝ անընդհատ լռութեան միջին՝ աղահարար կը ծխէին։

Եկեղեցում ժամերգութիւնը վերջանալու մօտ էր, երբ Մելիք Տէրտէրը դարձաւ ժողովրդին և շարաթ երեկոյեան քարոզի համառօտ բովանդակութիւնը կրկնելէն յետոյ՝ յայտնեց ժողովրդին «գեղի մեծաւորների այդ գիշերւայ վերջնական որոշումը»։ Ժամաւորների խուռն բազմութեան կողմէն ոչ մի ձայն – ծպտուն, ոչ մի անհամաձայնութեան խօսք չ'լուեց։ Երբ «մեծաւորները» որոշել են՝ կը նշանակէ, որ այդ է իրենց

համար ամենալաւ ճամբան՝ Աստուծոյ բարկութիւնը չի շարժելու համար։ Ուրեմն վճռուած է — պէտք է կատարել Սայիա Պէկի հրամանը...

«Առանց Աստուծոյ կամքին՝ ծառի մի տերևն անգամ վար չիյնար ծառէն», այդ չ'պէտք էր մոռանալ!

Մինչ, սակայն, եկեղեցում այդ որոշումը կը յայտնէր ժողովրդին՝ անգին, գիւղի հիւսիս — արևմտեան կողմէն, կը բարձրանար փոշու մի խիտ ամպ...

Շատ չանցած՝ յայտնեցան Սայիա Պէկի ծառաներէն 25 հոգի, սպառազինուած և այնպիսի հանդիսաւորութեամբ բազմած ձիերին վրայ, որ կարծես մի–մի ցեղապետ լինէին հարսանիք գնալիս։ Նրանց կ'առաջնորդէր ինքը Սայիա Պէկը, նստած գայմադամ Ռիշտի Պէկի նուիրած ընտիր նժոյգին վրայ։

Գնացքը խիստ հանդիսաւոր, տօնական կերպարանք ունէր...

Հասնելով Մելիք Մուրատին ու ընկերներին քով՝ Սայիա Պէկը ցած եկաւ ձիէն և դարձաւ Մելիք Մուրատին.

— Ինչպէ՞ս էք, Մելիք Մուրատ, յուսալ եմ, որ ուրախ անցկացրիք ձեր վար-

դավառի ոճնը, որ միաժամանակ մերն էլ է[1]։

— Օ՜, ինչպէ՞ս չէ, պատասխանեց Մելիք Մուրատը հեգնօրէն, — եթէ ձեր բարձր հովանաւորութեան ներքև ուրախ վարդէվար չի վայելենք՝ էլ ո՞րը և ո՞ւր պիտի վայելենք...

— Լաւ... Բայց ուշ կը վերջանայ ժամերգութիւնը։

1. Տաճկա — Հայաստանի մէջ շատ տեղեր քրդերն էլ կը ոճնեն Հայոց Վարդավառը, կը կատարեն այդ օրուան յատուկ «հայկական» ոճնախմբութիւններ, խաղեր և ծէսեր։ Այսպէս օրինակ. վարդի, ռահանի և այլ ծաղիկների փնջիկներով միմեանց երեսին խփել, միմեանց ծաղիկներ նետել, վարդաջուրով օծել մաղերն ու հագուստները, ծաղիկների փնջիկներով չուր սրսկել միմեանց վրայ, ընտանեցրած վայրենի թռչուններին (կաքաւ են.) ազատ, իրենց կամքին թողնել որ գնան իրենց ցանկացած տեղը, խռոված անմանց հետ հաշտուել, խմբովին բարձրանալ ատրերի ու բլուրների գագաթ ու խոտերի մէջ թաղլակիլ են. են։ Վարդավառը կամ «Վարդավարը» Տաճկա — Հայաստանի Հայոց և ոչ — մահմէտական Քիւրտերի համար ամենանուիրական ոճնն է ամբողջ տարուան ընթացքում. մեր նպատակէն դուրս էր վարդավառի վրայ երկար կանգ առնելը. կը բաւականանանք յիշելով, որ այդ օրը Հայոց և Քիւրտերի մէջ տեղի կունենան խիստ ուրախ, ծիծաղաշարժ ու անմեղ խաղեր...

— Ճուտով, ընդ ամենը 10 րոպէէն։

— Իսկ դուք աղօթելու կարիք չունիք, հարցուց Պէկը կատակով, որ ներս չէք մտնիր։

— Մենք այնքան մեղաւոր ենք, վրայ բերեց Մելիքը նոյն ձեւով, — որ այստեղ կենալու էլ հազիւ թէ արժանի լինիք... Իսկ այնտեղ — ներսը — բոլորը — բոլորը անմեղ հրեշտակներ են և նոյն քան անմեղ, որքան այդ եկեղեցին կառուցանող Հայ թագաւորները, որոնք նոյնպէս աղօթել գիտէին...

— Իսկ ձեր ճանապարհորդութիւնը, Պէկ խէր է, փոխեց Մելիքն իր խօսքի ձեր՝ կամենալով մօտենալ բուն խնդրին։

— Խէր է (բարի է), խէր, Մելիք... Այսօր մտադիր եմ սկսել մեր բնակարանի շինութիւնը... Լաւ է, իմ բաղդէն եղանակն էլ բաց է ու ծիծաղկոտ...

Մելիք Մուրատը չխօսեց այլ ևս ու սկսեց ձեռքի գաւազանովը գետնի վրայ ինչ որ խաղխզել...

«Հիւրերէն» մին ուշադրութեամբ կը հետեւէր Մելիք Մուրատի խաղխզումներին, կարծես մի բան կը կարդար այնտեղ — գետնի վրայ...

Իսկ միւս հիւրերն ու տեղացիք կը շա-

բանակէին ծխել։ Չնայած որ նրանցմէ մի քանիսը ուրիշ ժամանակ սովորութիւն չունէին ծխելու Մելիքին մօտ, բայց այսօր արեղաթող էր։ Այսօր, երևի, ծխելը մի առանձին գեր էր, որ Մելիք Մուրատն յանձնել էր նրանց...

XVIII.

Ժամերգութիւնը վերջացաւ։ Ժողովուրդը Մելիք Տէրտէրի առաջնորդութեամբ դուրս եկաւ եկեղեցու դաւիթը, որ տեղ նրանց կսպասէր Սայիա Պէկը։

Վերջապէս հասել էր ժամը, երբ այնքան մտատանջութեան տեղիք տուող խնդիրը պիտի պարզուէր։

Միաժամանակ թէ՛ ահով լեցած և թէ հետաքրքրութեամբ կ'սպասէր ամբոխը Պէկի անդառնալի հրամանին։ Այդ կզգար Պէկը, ուստի և շտապեց հանել նրանց սպասողական դրութենէն։

— Ապա տէրտէր, դարձաւ նա վերջնիս, — յայտնիր ժողովրդիդ, որ այժմ և եթ շտա-

պէն վեր առնել անհրաժեշտ գործիները և հաւաքէին այստեղ !

Մի պաղ սարսուռ անցաւ ամենքի մարմնովը, երբ որոտաց Պէկի ձայնը։ Չ'նայած որ նրանք արդէն վճռել էին՝ անսալ Պէկին, բայց ոչ ոք դեռ երեւակայած չէր ներկայ բոպէն իր բոլոր դառնութեամբ։ Այժմ միայն կըմբռնէին նոքա՝ խոստանալու և գործադրելու մէջ եղած ահագին վիհը։ Խոստանալը շատ հեշտ էր — մի բոպէում կարելի էր յանձն առնել շատ բան, բայց գործադրելու պահուն միայն աչքի կիյնար գործի ծանրութիւնը...

Ահա այդ էր պատճառը, որ Պէկի հրամանը լսելէն յետոյ տասնեակ բոպէներ անցան, բայց ո՛չ Մելիք Տէրտէրի լեզուն կը գօրէր մի բան ասել, ոչ էլ ժողովուրդինը։

Պէկը կրկնեց իր հրամանը, որմէ յետոյ միայն սթափուեց ամբոխը և ցրուեց, 15 բոպէէն յետոյ հարկաւոր գործիներով եկեղեցու դրանն հաւաքելու պայմանաւ։

Մինչ հեռվեռէ ժողովուրդը կը հաւաքուէր՝ Մելիք Մուրատը դիմեց Սայիտ Պէկին հետեւեալ խօսքերով.

— Պէկ, ասաց նա, դուք շատ լաւ գիտէք, որ այսօրը Հայերի համար մեծ ոչն

է, որ այս երկուշաբաթին Վարդավառ լինելէ զատ կը կոչուի և «մեռելոց», որ այսօր քրիստոնեայ մարդիկ պէտք է առաւօտեան ժամերգութենէն յետոյ անպայման գերեզմանատուն երթան և օրհնել տան իրենց նոյնեցեալների գերեզմանը... Մի խօսքով — այսօր տօն է և Հայոց համար ֆիզիքական գործերով զբաղուելը մեծ մեղք... Այդ՝ լաւ չէր լինի, որ ձեր բնակարանի հիմնարկութիւնը մի քանի օրով յետաձգէիք։

— Այդ այդպէս է, Մելիք, պատասխանեց Պէկը, բայց ես խնդրին ուրիշ կերպ կը նայիմ։ Իմ համոզմամբ այսօր ամենայարմար ժամանակն է՝ հիմքը ձգելու, այսինքն սկսելու, մեր բնակարանի շինութեան գործին, որովհետև տօներն անցնելէն յետոյ ամէն մարդ կը զնայ գէս — դէն և շատ դժուար կը լինի 100 հոգի մէկ տեղ բերել։ Մինչդեռ այսօր յարմար առիթ է, ամենքը գիւղումն են և ազատ... Այդ պատճառով ես վճռել եմ այսօր և եթ սկսիլ մեր գործը։

— Այժմ էլ, խնդրեմ, լսեցէք իմ կարծիքը. իմ կարծիքով չարժէ այսօրուան պէս նուիրական տօնին մարդոց կամքին հակառակ ստիպել նրանց, որ աշխատին... Ձեզ հարկաւոր են բազմաթիւ գործաւորներ, որոնք

կարողանային ամիսներ շարունակ դրաղել ձեր բնակարանի շինութեան գործով, մինչ-
գեռ մեր գիւղացիք, եթէ նոյն իսկ համա-
ձայնեին ծառայել ձեզ այսպիսի օրեր, այլ
ծառայութիւնը պիտի տեւէր այսօր մինչեւ
երեկոյ և, շատ – շատ, մինչեւ վաղը երե-
կոյ... Այնուհետեւ իրաքանչիւրը պիտի գնայ
իր գործին և ձեզ հարկ պիտի լինի գործա-
ւորներ ճարել ուրիշ տեղերէ... Որքան իմ
կարծիքով աւելի լաւ կը լինէր առաջուց
վարձել ուրիշ բանւորներ և ապա սկսիլ ու
շարունակել...

— Ես գիտեմ իմ անելիքը – վճռեց Պէ-
կը, – ոչ օրի խորհրդին էլ չեմ կարօտիր...
Վարձել – վարձել, կասէք, կարծես վստահ
լինելով, որ անպայման վարձկան գործա-
ւորներ պիտի աշխատին իմ բնակարանի
շինութեան վրայ...

— Ձեն էլ ամաչեր, վրայ բերեց մի ծե-
րունի քիւրտ, – հարիւրաւոր տներէ և հա-
զարաւոր հոգուց բաղկացած մի գիւղ, կար-
ծէք, չպիտի կարողանայ իր Պէկին համար
մի տպարանք կառուցանել, որ մենք պիտի
սոսիպլինք պիմել ուրիշներին...

— Բան չունես, նկատեց Պէկը, – ես
գիտեմ իմ անելիքը...

Մինչ այդ՝ գիւղացիք արդէն հաւաքուել էին և կապասէին Պէկի վերջնական կարգադրութիւններին։ Մելիք Տէրտէրն էլ այդտեղ էր, բայց այնպիսի խղճալի կերպարանք էր ստացել, որ մարդ նայելով նրան՝ թէ՛ կը խղճար նրա վրայ և թէ միաժամանակ կը համակուէր բուռն զարշանքով ու ատելութեամբ դէպի այդ ողորմելի սդաունը, որ մասամբ իր ազգադաւ ձեռքով էր լարել այդ որոգայթը...

Տիրեց մի քանի րոպէ խորին լռութիւն, որմէ յետոյ Սայիա Պէկը յետ սոթատեց թեերը, վեր առաւ գիւղացիներէ մէկին ձեռքէն փետտաը, մօտեցաւ եկեղեցու արտաքին դրանը և «բիսմի՛ղահ ռահմանի՝ ռահիմ» շշնչալով, — փետտատուն իջաւ դրան ներքին շէմին... Ամբոխը, ապուշ կտրած, կը դիտէր Պէկի շարժումներին... Բայց երբ նա տեղ և երկրորդ ու երրորդ հարուածները՝ արդէն յայտնեց, որ Սայիա Պէկը իր ապարանքի տեղն ընտրել էր Հայոց հնադարեան եկեղեցւոյ տեղը, որովհետև Նաճարան գիւղում ամենալաւ տեղն էր այդ, ուր կարող էր փաշիշահի բարեկամը երջանիկ կեանք վարել...

Ընտրութիւնն խոկապէս շատ յաջող էր,

որի մասին երևակայել անգամ չէին կարող, և ոչ նոյն իսկ Մելիք Տէրտէրը — Սայիա Պէկի այդ անկեղծ խորհրդատուն... Հար�ածը կարծուածէն աւելի մեծ էր և զարհուրելի... Ինչ պէտք էր անել?

XIX.

— Ինչ կանէք, Պէկ, խելքը կորցրած հարցրեց Մելիք Մուրատը՝ մօտենալով Սայիա Պէկին և կատաղի նայուածքը սևեռելով նրա դէմքին։

Պատասխան չ'ստացուեց։ Պէկը կը շարունակէր իր գործը... Նա գիտէր իր անելիքը...

— Ինչ է միտքդ, քիւրտ, — կրկնեց Մելիքն իր հարցը, բացարձակապէս անկարող լինելով զսպել իր բուռն զայրոյթը, որ հոգին դուրս կը բերէր, ասա՛ ինձ, Ինչ է արածդ...

— Սկիզբը կը դնեմ ապարանքիս շինութեան, զոզոջուն ձայնով պատասխանեց Պէկը և ձեռքի փետատի կոթովն յետ հրեց

Մելիք Մուրատն, որը մնաց իր տեղումն անշարժ...

Քրտերը շրջապատել էին նրանց և Պէկի մի փոքր ակնարկին կսպասէին՝ վրայ թափուելու համար։ Բայց մեր «անասնուածներն» էլ քնած չէին!

Երբ քիւրտ Պէկն իջուց դրան շէմքին մի նոր հարուած ևս՝ Մելիք Մուրատը մոլեգնաբար խլեց նրա ձեռքէն փետտաը, շպրտեց մի կողմ և որոտաց.

— Մեր ազգային եկեղեցու մոխրին էլ դուրպան կանեմ քեզ նման հազար հատ բռնակալ շուն...

— Դժոխքի զաւակ, մոնչաց պէկը և կայծակի արագութեամբ սուրը մերկացնելով յարձակուեց Մելիքին վրայ...

Այնուհետև Աստուած միայն գիտէ, թէ ինչ ահռելի իրարանցում ինկաւ քրդերի և Մելիք Մուրատեանների մէջ...

— Մահ կեաւորներին... կը գոռար պէկը և կը հրամայէր սրէ անցկացնել ըմբոստներին։

— Մահ կամ Պատիւ... կ'որոտար Մելիք Մուրատը և իր սակաւաթիւ համախոհներով հերոսական ճիգեր կը թափէր, որպէս զի յետ մղէ քրդերին Հայոց եկեղեցւոյ դռնէն...

Ընդ ամենը 8 հոգի էին Մելիք Մուրատեանները և զինուած էին դաշոյններով ու ատրճանակներով, որ առաջ թագդրել էին քղանցքներին ներքև. դրանցով նրանք պիտի պաշտպանէին Հայոց Եկեղեցու Պատիւը՝ ինքնակոչ Պէկի ոտնձգութեանց դէմ։ Բայց ինչ անէր 8 հոգուց բաղկացած այդ խմբակը, երբ քրտերը երեք պատիկ աւելի էին և համեմատաբար աւելի լաւ զինուած, մանաւանդ և հեծեալ...

Իրաւ է, թէ այդպեղ շատ Հայեր կային, բայց դրանք այնքան խեղճուկրակ, ողորմելի մարդիկ էին, որ խելքերը կորցրած, սարսափահար եղած՝ քրենք էլ չ'գիտէին ինչ պէտք էր անել։

Սառած, քար կտրած «մեծաւորներն» էլ չէին համարձակէր միջամտել և միայն երկու ճանապարհով կարող էին հանդստացնել իրենց խիղճը։ — Մէկ որ՝ ազօթքով պիտի Երկնքի դուռը հայցէին և երկրորդ որ՝ սրտի խորքերէն՝ «հասարակաց հանգիստը վրդովող անասուած» Մելիք Մուրատի և նրա արբանեակների բնաջնջումը պիտի մաղթէին նոյն ողորմելի Երկնքէն...

Բայց պէտք է խոստովանիմ, որ «խոհեմ» ամբոխը՝ անասելի լաց ու ջիւան, աղմուկ

և կոծ բարձրացնելով այն օգուտը տաս, որ գիւղի հայ կանանց և աղջիկների ուշադրութիւնը գրաւեց զէպի կուի վայրը...

Միւս կողմէն Մելիք Տէրաէրը՝ որտանց զղջալով իր ապիրատութիւնների վրայ՝ կը խնդրէր ամբոխէն.

— Աղօթիցէ՛ք, սիրելիներս, աղօթիցէ՛ք, որ Աստուած խելք տայ մեր «անաստուածներին», որ օրէնքի առջև խոնարհիլ սովորին... Երեսներդ խաչակնքեցէ՛ք, որ չարը խափանուի...

Ահա և կանայք ու աղջիկներ, թուով մօտ 10 հոգի, առաջնորդութեամբ Ճավահիրի և Սիրանոյշի, զինուած կացիններով ու մանգաղներով, — գրոհ տին գիւղէն զէպի օրհասական կուի տեղը ու ճեղքելով ամբոխը՝ անցան Մելիք Մուրատեաններին կողմը...

Այդ տեսնելով ամբոխի մէջէն մի քանի երիտասարդներ ու մի զառամեալ ծերունի՝ իրենք էլ երեսները խաչակնքեցին և հետեւեցան խլական սեռին։

Եւ սկսեց սոսկալի մարդակերութիւնը...

— Ամօթ ձեզ, մարդիկ, հապար ամօթ... — լսեց մի կանացի խեղդուկ ձայն, — ամո՛թ ձեզ, որ քարացած սրտով լոկ հանդիսատես կը լինիք, թէ ի՞նչպէս ձեր չ'հա-

ւանած մարդիկը արիւն կը թափեն եկեղեցւոյ սիրոյն համար... և դուք, սարսուկ, կոյր «Հաւատացեալներդ» դեռ կը տատանուիք... ամօ՜օթ ձե՛զ...

Բայց բարեպաշտ «հաւատացեալները» ցաւօք սրտի տեսան, թէ ինչպէ՛ս քրդու արիւնածարաւ սուսերը խրուեց «ամՆթ» ազատակոչ Հերոսուհու կուրծքը և Նա շնչասպառ փուեցաւ գետին...

Հիմա հարց էր, թէ այդ Կինը արքայութիւն պիտի գնար, թէ՞ դժոխք... Եւ այդ մեծ հարցը մի քանի բոպէ զբաղեցրեց «հաւատացեալների» միտքը... Ահա և մի ուրիշ Զոհ – մի դալկահար Երիտասարդ, որը 2 քրդերի հոգին իր հետ վեր առած ինկաւ և ամո՛ւր – ամո՛ւր սեղմուեց Նահատակ Մօր կուրծքին վրայ...

Ա՜խ, սիրելի ընթերցո՛ղ, ինչպէ՛ս ասեմ քեզ, որ այդ Երիտասարդ Հերոսը Աբամն էր, Մելիք Մխաքի որդին, Ճամահիրի անմոռանալի Եղբայրը, որ Իր Մօր հերոսական մահը տեսնելով՝ արիւնը գլուխը խփեց և ինքն էլ չ'գիտցաւ, թէ ինչպէ՛ս Սայիա Պէկի թունաւոր սուրն իջաւ Իր գլխին...

Այդ վերին աստիճանի սրտաշարժ տեսարանը խորապէս յուզեց ամբոխի սիրտը

և տեղի ունեց ընդհանուր զայրոյթի, որը արտայայտուեց նրանով, որ մեծամասնութիւնը վճռեց՝ դուրս գալ լոկ հանդիսատեսի դերէն...

Գլխակոր, սարկական լռութեան դատապարտուած ամբոխի վճռական կամքն արտայայտող կիրքը մի հոսանք է խկապէս, որի առաջ ոչինչ չէ կարող դէմ առնել։ Դժուար է, շատ դժուար այդ հոսանքն յառաջացնելը, բայց նրան գոյացնելէ յետոյ կարելի է հրաշքներ գործել... Այդ հոսանքը խոչնդոտ չի ճանաչեր...

Սայիա Պէկն իր խմբով այժմ գործ ունէր այդ հոսանքին հետ և ի զուր կը փորձէր նա մաքառիլ հեղհեղուկ ստուարացող ախոյեանների դէմ... Իրաւ է, որ քրդերը զինուած էին շատ լաւ և բացի այդ նրանց ամեհի ձիերն էլ կը գիւրացնէին նրանց գործը, բայց մի անգամ ծովի նման մրրկուած ամբոխը հում – հում կուտէր նրանց, եթէ քրտերը խոհեմութիւն չունենային խոյս տալ կատաղած ամբոխի սարսափելի վրէժխնդրութենէն...

Փախաւ Սայիա Պէկը՝ Հայոց հնագարեան եկեղեցու դրանը թողնելով իր սիրելի թիկնապահներէն 14 հոգի։ Նոյն իսկ ինքը

Սայիա Պէկը աչ աղբրէն սատցել էր կացնի մի թեթեւ վէրք, որ նրան հասցրել էր ձա-վահիրը — իր նախկին սիրոչ գեղեցիկ դուստրը . . .

Հայոցմէն ինկել էին՝ Մելիք Մուրատը, երեք «հիւրերը», որ Հայեր էին պարսկահրպատակ և Պ. Թափառականի սիրելի ընկերները, Արամը, 2 Օրիորդներ, 5 կանայք և 20 հոգի էլ ի վերջոյ մատնակցողներէն, ի միջի այլոց և զառամեալ Ծերուկը։

Կային և բաւական թիւով վիրաւորուածներ, որոնց մի մասը ձիերի սաքերի կոխան էին եղել։

XX.

Այդ արիւնահեղ անցքէն 2–3 ժամ յետոյ Նաճարանի Հայոց գերեզմանատան մի անկիւնում՝ 4–5 գիւղացիներ, դառն արտասուք թափելով, ախ ու վախ անելով, — կը փորէին մի մեծ փոս։

Այդ փոսի մէջ պիտի ամփոփէին Զոհերի աճիւնները, որովհետև այդպէս էր որոշել Մելիք Տէրտէրը։

— Ամենքն էլ մի գործի համար ինկան և ամենքն էլ մի տեղում պէտք է թաղուին, կասէր Մելիք Տէրտէրը։ Այրպէս էլ եղաւ։

Բայց ոչ մի կերպ կարելի չեղաւ համոզել Մելիք Տէրտէրին, որ Մելիք Մուրատի մարմինն էլ միւսների հետ միատեղ թաղուի։

— Ա՛հ, թողէ՛ք, ի սէր Աստուծոյ, կը գոչէր Աստուծոյ խոնարհ ծառան և եկեղեցւոյ պաշտօնեան, — ի՞նչպէս կարելի է... Այն Մարդը, որ իր կենդանութեան ժամանակ այնքան հակառակ է եղել ինձ, որը ամբողջ տարիներով խոստովանութեան և հաղորդութեան երես չէ տեսել, որը փոխանակ մեր ճանիչներին մարդավարութիւն քարոզելու՝ ըմբոստանալ կը յորդորէր, որը..., — մի՞թէ կարելի է այդ Անասուածին դնել այն մարդոց կողքին, որոնք ջերմեռանդութեամբ հաւատացել են կենդանի Աստուծուն...

Մելիք Տէրտէրը լաւ ուիթ էր գտել վրէժխնդիր լինելու այն Մարդուն, որը կենդանութեան ժամանակ միշտ մերկացրել էր փտած հոգևորականութեան զզուելի դիմակը...

Եւ Նա թաղուեց առանձին, նոյն իսկ առանց Մելիք Տէրտէրի «սուրբ աղօթքին» ու օրհնութեանն արժանանալու...

XXI.

Կէս – գիշեր էր։

Մրսեցնելու աստիճան ցուրտ քամին սոնալով կանցնէր Նաճարանի գերեզմանատան վրայէն, որ տեղ մի խումբ երիտասարդներ ադեկէզ հառաչանքներ արձակելով կը մօտենային այն թարմ հողաթմբին, որի ներքև կը հանգչէր Գաղափարի անձնանուէր Զինուորը – Մելիք Մուրատը։ Այն Հոկան, որը միշտ պաշտպան էր կանգնել Երիտասարդների, ճնշածների, բոլոր խեղճերի ոտնահարուած իրաւունքներին ընդդէմ փտած հասկացողութիւնների, ընդդէմ ազայական ոտնձգութիւնների...

Հասան նրանք իրենց որսնած հողաթմբին և խորին երկիւղածութեամբ խոնարհուեցան այդ անշուք, ցածլիկ, հայ կղերի մրմունջին չարժանացած շիրմին վրայ...

— Հայրի՛կ... անգի՛ն Հայրիկ... սուրբ սկսրնների դուրբան, Հայրիկ ճան...

Սիրանոյշն էր այդ, որ՝ մազերը փետելով, երեսը հողաթմբին քսելով, աչքերէն

արցունքի հեղեղներ հոսեցնելով, հոգի կարաստող եղանակով կ'ողբար իր սիրեցեալ Հայրիկի շիրմին վրայ... Թե՛զ աղջիկ, ո՞ւր է քո ճշմարտ լեզուն, որով քո խօսակիցին կը զիւթէիր... այժմ երկու խօսք էլա չէ կարող իրար կցել և ասել, որ սիրան հովանայ, մի փոքր թեթևութիւն զգայ...

— Հայրի՛կ... Հայրի՛կ...

Եւ ցուրտ քամին կը շարունակէր փչել կատաղութեամբ՝ իր հետ զէպի արևելք տանելով Սիրանոյշի, Հրաչեայի, Գաբրիէլի, Թաթուլի և մի քանի ուրիշ թափառականների հոգեբուղխ մրմունջները, որոնցով նրանք կուխտէին հաւատարմութեամբ և սիրով պահպանել Մելիք Մուրատի թողած ս. Աւանդը — Պարտականութեան և Փրկութեան վեհ Գաղափարը — ու շարունակել այն սրբազան Գործը, որի համար զոհուեց ՆԱ..

ՎԵՐՋ Գ. ՀԱՏՈՐԻ

ՅԱՒԵԼԻԱԾԱԿԱՆ ՅԱՆԿ

«ՔԻԻՐՏ ՊԷԿԻ» ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ

(Բ. ՄԱՍԷՆ ՍԿՍԱԾ)

Արժ. Գրիգոր քահ. Եսայեան
Պ. Խաչատուր Զալիքեան
» Միհրան Ղերսիսեան
» Սեդրակ Պուլուքլեան
» Տրդատ Կապասագալեան
» Վահան և Մկրտիչ Ծատուրեանց
» Համբարձում Մուսայեան
» Եղիա Քէօսեան
» Գալուստ Խրիմեան
» Ստեփանոս Ջուքոյեան
» Արշակ Առիւծեան
» Մկրտիչ և Յարութիւն Ծուկուրեանց
» Կարապետ Կարամանթոսեանց
» Զատիկ Երեմեան
» Աբգար Կարագէօզեան
» Առաքել Մարտիրոսեան
» Համբարձում Առաքելեան
» Յովհաննէս Սթամպօլեան
» Զատիկ Արզումանեան
» Յարութիւն Գիւրջեան

Պ. Եղբ. Մխիթարեանց
» Անուշաւան Խարազեան
» Գևորգ Էփրանոսեանց
» Պաղտասար Գահրիմանեան
» Ռափայէլ Շաքարեան
» Գասպար Գևորգեան
» Գասպար Իօքսիզեան
» Այեաստ Յակոբեան

(Գ. ՄԱՍԷՆ ՍԿՍԱԾ)

Օրիորդ Հ. Թումանեան
» Ա. Զալիքեան
» Հ. Ոսկան
Տիկին Աստղիկ Հայկազեան
» Ռմն
Պ. Մարտիկ Դանիէլեան
» Ա. Յովհ.
» Պ. Զ.